ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

(նկարագրական փորձ)

գիրք առաջին

Երևան
2005

ՀՏԴ 929.6 /479.25/
ԳՄԴ 63.2 Հ
Հ 246

Հ 246 ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ /նկարագրական փորձ/, գիրք առաջին: Եր.: Հեղինակային հրատարակություն. 2005.- 96 էջ: Գծապատկերները՝ Վարդուհի Գրիգորյանի:

Գիրքը երկար տարիների որոնումների արդյունք է: Այն հայկական իշխանական զինանշանների նկարագրական փորձ է: Ներկայացվող զինանշաններով ամբողջական պատկերացում կարելի է կազմել Հայոց իշխանական տների, նրանց ուժի ու ոգու հաստատումը հանդիսացող զինանշանային պատկերագրության և իշխանական տների ժառանգորդության մասին:

Գրքի այս պրակի նյութերի զգալի մասը տպագրվել է 1989-1990 թվականներին «Պիոներ կանչ» թերթում, ինչպես նաև մասնակի հավելումներով 2001 թ. հրատարակված «Հայկական իշխանական զինանշանները» գրքույկում:

Գիրքը նախատեսված է Հայոց պատմության մասնագետների և ընթերցող լայն հասարակության համար:

ԳՄԴ 63.2 Հ

ISBN 99930-4-347-7

© ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ, 2005
© ՊԵՏՐՈՍՅԱՆՑ, Հ. Տ. 2005

Մեր մեծագույն պատմիչ
Մովսես Խորենացին հաղորդել է,
որ Քրիստոսի ծննդից առաջ, 2492 թվականին
հայ ազգի անվանադիր Հայկ Նահապետը
Խոշաբ գետի ափին հաղթել է Բելին
և Ժամանակի ու Պատմության մեջ
ապահովել
Հայոց տեղը:

2008 թվականին լրանում է
Խոշաբի հաղթանակի 4500 - ամյակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ....5
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՁԻՆԱՆՇԱՆԸ....6
ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....9
ԳՆԹՈՒՆԻՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....11
ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....14
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....16
ԿԱՐՍԻ ԳԱԳԻԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....20
ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....22
ԿՅՈՒՐԻԿՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....26
ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....29
ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ....34
ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՁԻՆԱՆՇԱՆԸ.... 38
ՁԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ....44
ՎԱՀՐԱՄՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....51
ՎԱՉՈՒՏՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ....54
ԱԶԻԶԲԵԿՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....59
ԴՍԵՂԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....61
ՀՈՆԵՆՑ ՏՈՀՄԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....65
ԽԱՂԲԱԿՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....69
ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ....74
ՇԱՀՈՒՌՆԵՑՈՑ ՁԻՆԱՆՇԱՆԸ....80
ՄՇԿԱՎԱՆՔԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....82
ԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԻ
ՁԻՆԱՆՇԱՆԸ....84
ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....86
ԱՌԻՆՋԻ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ....89
ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ....92

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Զինանշանը (գերբ) պատմական ավանդույթներ արտահայտող տարբերանշան է: Այն ծագել է գերմաներեն «Erbe» բառից և նշանակում է ժառանգություն: Հայ իրականության մեջ գործածվում է զինանշան բառը:

Զինանշանը հատուկ է պետություններին, պետության մաս կազմող տարածքային միավորումներին (նահանգ, գավառ, քաղաք), համքարություններին, ազնվականական ու իշխանական տոհմերին, առանձին մարդկանց և արտացոլում է աշխարհագրական, վարչական, տնտեսական, կենցաղային, անհատական առանձնահատկություններ: Պատկերվում է դրամների, մեդալների, դրոշների, ռազմի առարկաների, կառույցների վրա:

Զինանշանը ծագել է մարդկության պատմության արշալույսին՝ կենդանիների, տոտեմների, տոհմի պահապանի պաշտամունքի հաստատումով: Ավելի ուշ, երբ կազմավորվեցին պետական միավորումները, պետությունները, երբ ձևավորվեցին իշխող տոհմերը, զինանշանը խորհրդանշական առավել ընդգծված տեսք ու իմաստ ձեռք բերեց և դարձավ ժառանգաբար փոխանցվող տարբերանշան:

Աշխարհի հնագույն ժողովուրդների նման՝ հայերը ևս, սկսած վաղնջական ժամանակներից՝ ստեղծել են տարբերանշան-զինանշաններ: Հայկական լեռնաշխարհում պահպանված ժայռապատկերների պատկերագրության շատ տարրեր այնուհետև մի քանի հազարամյակ անց կրկնվել և տեղ են գտել պեղումներով հայտնաբերված մ.թ.ա. 3-րդ–1-ին հազարամյակների պաշտամունքային, կենցաղային, ռազմի առարկաների վրա: Դրանք Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայերի էթնիկական միասնության ու հաջորդայնության աներկբայելի հաստատումն են:



ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Հայկական լեռնաշխարհում պետական առանձին միավորումների մասին պատմական տեղեկություններ կան շումերական արձանագրություններում՝ սկսած մ.թ.ա. 28-27-րդ դարերից: Շումերական, աքքադական, ասուրական արձանագրություններում Հայկական լեռնաշխարհի տարածքում հիշատակվում են Արատտա, Արմանի, Արմե-Շուպրիա, Հայասա-Ազզի, Նաիրի, Բիայնա, Ուրուատրի (Արարատի) պետական կազմավորումները:

Վերջինիս էլ, մ.թ.ա. 10-րդ դարից սկսած՝ վիճակվեց ամբողջ Հայկական լեռնաշխարհն ընդգրկող պետականություն կերտողի, ազգաստեղծ դժվարին դերը:

Ասորեստանի Աշշուրնաձիրապալ արքան մ.թ.ա. 9-րդ դարում թողել է Արարատյան թագավորության վերաբերյալ առաջին տեղեկությունները: Այնուհետև Սալմանասար Գ- արքան ձեռնարկել է հինգ արշավանք դեպի Արարատյան թագավորություն, որտեղ իշխում էր Արամեն:

Մ.թ.ա. 840-825 թվականներին Արարատում գահակալել է Սարդուրի Ա-ն, որը հիմնադրել է Տուշպա (Վան) մայրաքաղաքը: Նրա օրոք վերջնականապես կազմավորվեց Արարատյան թագավորությունը:

Մ.թ.ա. 825-786 թվականներին իշխում են Իշպուինին և Մենուան: Նրանց գահակալության ժամանակաշրջանում երկիրն Ասորեստանի հետ ռազմական կոնֆլիկտ չի ունեցել: Խաղաղության տարիները հնարավորություն տվեցին երկրում կարևոր բարեփոխումներ կատարել:

Դրանք առնչվում էին երկրի կենսագործունեության բոլոր բնագավառներին: Դրանցից կարևորագույնը ռազմական ռեֆորմն էր, որն իրագործվեց լեզվի միասնականացման, հողի վերաբաժանման, իրավաենթակայական բարեփոխումների հետ փոխկապակցված:

Ձեռնարկված բարեփոխումներն արգասաբեր եղան: Եվ Արգիշտի Ա-ի օրոք (մ.թ.ա. 786-764 թթ.) ջախջախիչ պարտություն կրելով նրանից՝ Ասորեստանն իր գերիշխանությունն Առաջավոր Ասիայում զիջեց Արարատյան թագավորությանը: Մ.թ.ա. 782-ին Արարատյան դաշտում Արգիշտի Ա-ն հիմնադրում է Էրեբունի-Երևան քաղաքը, իսկ մ.թ.ա. 776-ին՝ Արգիշտիխինիլի քաղաքը: Արգիշտի Ա-ի օրոք Արարատյան թագավորությունը դարձավ գերտերություն:

Սարդուրի Բ-ն (մ.թ.ա. 764-735/34 թթ.) շարունակեց հոր գործունեությունը, սակայն մ.թ.ա. 743-ին Արփադ քաղաքի մոտ պարտվեց Թիգլաթպալասար Գ-ից:

Մ.թ.ա. 714-ին Մանայի վրայով Արարատյան թագավորություն ներխուժեց Սարգոն Բ-ն, որը դաժան ավերածություններ կատարեց ողջ երկրով մեկ: Առանձնապես ծանր էր նրա կողմից հոգևոր կենտրոն Մուսասիրի գրավումն ու թալանը: Մուսասիրի ավերման աղետը Ռուսա Ա-ին մղեց ինքնասպանության:

Արգիշտի Բ-ին (մ.թ.ա. 713-685 թթ.) հաջողվում է կարճ ժամանակում հզորացնել երկիրը: Նրան հաջորդած Ռուսա Բ-ն, որը իշխեց մինչև մ.թ.ա. 645 թվականը, շարունակեց հոր քաղաքականությունը: Նա Արարատյան դաշտում կառուցեց Թեյշեբաինի հզոր քաղաքը: Մ.թ.ա. 645-625 թվականներին երկրում իշխում էր Սարդուրի Գ-ն:

Մ.թ.ա. 617-ից իշխել է Ռուսա Գ-ն, որն իրեն անվանել է Էրիմենայի որդի: Մ.թ.ա. 609-590-ական թվականներին գահակալել է Արարատյան թագավորության հայտնի վերջին արքան՝ Ռուսա Դ-ն:

Արարատյան թագավորության երեքհարյուրամյա պատմության կարևորագույն նվաճումը հայ ժողովրդի՝ որպես ազգային ամբողջականության ձևավորումն է: Դրանով պետք է բացատրել Արարատյան թագավորական տոհմի անկումից անմիջապես հետո՝ գրեթե նույն սահմաններում, Երվանդունիների իրավահաջորդությունը:

Էրեբունի ամրոցի դղյակի պատերին, պեղումներով Էրեբունի, Թեյշեբաինի քաղաքներից գտնված արքայական վահանների վրա առկա են մի քանի տարբերակներ, որոնցից հիմնականը կենտրոնում ներճկված կողերով քառակուսու ներսում արև-հավերժություն խորհրդա-

նշող, քառակուսու երկու կողմերում գլխով դեպի արև-հավերժությանը նայող երկու առյուծների պատկերն է:

Չափազանց խոսուն է Էրեբունի ամրոցի դղյակի պատին պահպանված որմնանկար-զինանշանը, որը նաև հետաքրքիր գունային լուծում ունի:

Ընդհանուր պատկերը լաջվարդ կապույտ ֆոնի վրա է: Ներճկված կողերով քառակուսին իրականացված է գորշ կարմրադեղով և ներսում ու կենտրոնում ձևավորված է ծիրանագույն կետավոր շրջանակներով: Քառակուսու ներսում կողային եզրերից սկսվող ծիրանագույն շրջանակ է, որի վրա պատկերված է 16 ճառագայթից բաղկացած արև: Արևի ճառագայթները մեկընդմեջ կապույտ և գորշ կարմրադեղով են: Արևի հիմքը նույնպես կարմրադեղով իրականացված շրջանակ է, որի ներսում դարձյալ ծիրանագույն շրջանակ է գծված:

Արև-հավերժության երկու կողմերում պատկերված են գլխով դեպի արևը շրջված վեհատես արու առյուծներ: Առյուծները իրականացված են ծիրանագույն գույնով և սև եզրագծերով: Պատկերված են քայլ անելու դիրքով: Բաց երախը, դեպի վեր տնկված պոչերը, հրացայտ աչքերը, եղևնանախշի միջոցով իրականացված, ցցված ելուստներով բաշերը խորհրդանշում են առյուծների հզորությունն ու ուժը՝ արև-հավերժություն-երկիր հայրենին պահելու վճռականությունը:

Ամենայն հավանականությամբ, գունային այս լուծումները Արարատյան թագավորների դրոշի գույներն են:

Այս հիմնական տարբերակին զուգահեռ՝ բացարձակ նույն գունային լուծումներով իրականացված են նաև այլ տարբերակներ: Նույն արև-հավերժության մի կողմում առյուծով, մյուս կողմում՝ ծնկածալ, մարտի պատրաստ միաեղջյուր ցուլի պատկերով, ինչպես նաև նույն արև-հավերժության երկու կողմերում նույն ծնկածալ ցուլերի պատկերով զինանշանն է:



ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հայաստանում Արտաշեսյանների արքայատոհմն իշխել է մ.թ.ա. 189-ից մինչև մ.թ. I թվականը:

Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիրը Արտաշես Ա-ն է: Մ.թ.ա. 189 թ. Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյան թագավորության պարտությունից հետո, նա Հայաստանը հայտարարել է անկախ պետություն:

Արտաշես Ա-ն արձանագրություններում իրեն անվանել է «Երվանդական», որով փաստել է տոհմակցական կապը մ.թ.ա. 590 թվականից Հայաստանում իշխող Երվանդունի արքայատոհմի հետ:

Արտաշես Ա-ն վերամիավորել է Հայաստանից անջատված կամ խլված ծայրագավառները և ստեղծել միաձույլ, համազգային պետություն:

Արտաշեսյան արքայատոհմի ամենաականավոր ներկայացուցիչը Տիգրան Բ Մեծն է, որի օրոք Հայաստանը դարձել է Մերձավոր Արևելքի ամենահզոր պետությունը: Նրանից սկսած՝ Արտաշեսյան արքաները կրել են «արքայից արքա» տիտղոսը, իսկ Տիգրան Բ-ն՝ նաև «Աստված» պատվանունը:

Հռոմի հետ պատերազմներում՝ մ.թ.ա. 69-66 թվականներին, Տիգրան Բ-ն կորցրել է նվաճած հողերը, բայց պահպանել Մեծ Հայքի անկախությունն ու ամբողջականությունը:

Տիգրան Մեծի որդին՝ Արտավազդ Բ-ն, և թոռը՝ Արտաշես Բ-ն, զոհվել են Հռոմի կայսրության դեմ մղվող պայքարում:

Տիգրան Բ-ի և նրա հաջորդների պայքարը Հռոմի դեմ ունեցել է նաև հելլենիստական առաջավոր քաղա-քակրթությունը պաշտպանելու նպատակ:

Արտաշես Բ-ի մահից (մ.թ.ա. 20 թ.) հետո արքայա-տոհմն անկում է ապրել, իսկ մ.թ. I թվականից հեռացել է պատմության թատերաբեմից:

Արտաշեսյան տոհմի զինանշանն առկա է այդ արքայատոհմի ներկայացուցիչների կտրած դրամներին՝ թագի վրա: Լավագույն օրինակը պահպանվել է Արտաշեսյան Տիգրան Բ Մեծի թագի վրա: Այն իր արմատներով հարազատ է Արարատ-յան արքայատան զինանշանին և իրենից ներկայացնում է հետևյալ պատկերը. կենտրոնում ութաթև աստղ է, որը խորհրդանշում է արևը՝ հավերժությունը, նրա աջ և ձախ կողմերում մեկական արծիվներ են, որոնք պոչով հենված են աստղի հիմքին և գլխով շրջված են դեպի արևը: Արծիվը ուժի և իմաստության խորհրդանիշն է: Եվ այս դեպքում էլ արքայատոհմի ներկայացուցիչները զինանշանը որդեգրելիս համոզմունք են ունեցել, որ հավերժությունը (արև) կարող է գոյություն ունենալ միայն ուժով (արծիվներ):

Ինչպես և այլուր, Արտաշեսյան տարբեր արքաների պարագայում ևս, առկա են զինանշանային տարբերակներ, օրինակ՝ Տիգրան Բ-ի որդի և հաջորդ Արտավազդ Բ-ն նույն տիգրանյան թագի վրա կրել է միայն ութաթև աստղի նշանը:

Արտաշեսյան զինանշանը պատկերված է Հայաստանի Առաջին Հանրապետության և Հայաստանի Երկրորդ Հանրապետության զինանշանների վրա (վահանի աջակողմյան ստորին հատվածում):

ԳՆՈՒԹԻՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հայկական հնագույն նախարարական տոհմերից է Գնթունիների իշխանական տունը: Գնթունիների մասին հիշատակություններ կան Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, վրաց Անանուն պատմիչի (9-րդ դար), Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ), Սամուել Անեցու, Ստեփանոս Օրբելյանի և հետագա պատմիչների երկերում: Գրավոր վկայությունների շարքը լրացնում են Ապարանում, Զովունիում, Անձավում, Օղուզլույում (Անի քաղաքի մոտ) փորագրված վիմագիր արձանագրությունները: «Գահնամակի» համաձայն՝ Գնթունիները Հայոց արքունիքում զբաղեցնում էին 21-րդ գահը, իսկ «Զորանամակի» համաձայն՝ ներգրավված էին հայկական բանակի հյուսիսային զորախմբի մեջ և ունեին 300 հեծյալ զինվոր:

Գրավոր աղբյուրների համաձայն՝ Գնթունիները մեկ հազարամյակից ավելի իշխել են պատմական Նիգ գավառում (ներկայումս՝ Ապարանի, Արագածի, Եղվարդի, Աշտարակի հյուսիս-արևելյան տարածաշրջանում) և որոշակի ներդրում ունեցել համահայկական քաղաքական, զինական և մշակութային կյանքում:

Մովսես Խորենացին գրում է Հայոց Աբգար թագավորի օրոք՝ 1-ին դարում գործած Զորա Գնթունու մասին, իսկ Փավստոս

Բուզանդը հիշատակում է, որ Արշակ Արշակունին 353-357 թվականների միջև հռոմեական կայսեր մոտ բանակցելու ուղարկված դեսպանախմբում ընդգրկել է Դեմետ Գնթունուն: 400 թվականին պարսից Վռամ արքան Սամ Գնթունուն նշանակել է Սյունյաց նահապետ: 9-րդ դարի վերջերին Հասան Գնթունին Բագրատունիների թագավորության զորահրամանատարն էր, իսկ Աշոտ և Վասակ Գնթունիները նույն շրջանում նշանակվել էին Գուգարքի կառավարիչներ:

Ավարայրի ճակատամարտին մասնակցել և իր 19 զինվորների հետ նահատակվել է Տաճատ Գնթունին, իսկ տոհմի մեկ այլ իշխան ճակատամարտից հետո տարվել է պարսից արքայի ատյան: Այս տոհմից կարող է լինել 630-641 թվականներին Ամենայն Հայոց կաթողիկոս Եզր Փառաժնակերտցին:

Գնթունիների մեծագույն ներդրումը քրիստոնեական վաղ շրջանի հոգևոր շինությունների կառուցումն է: Քասաղ գետի երկայնքով նրանք 4–5-րդ դարերում կառուցել են Քասաղի, Ջարջարիսի, Ջովունիի (երեք), Աստվածընկալի, Ափնայի, Եղիպատրուշի, Բուժականի միանավ ու եռանավ եկեղեցիներն ու տաճարները: Եզր Փառաժնակերտցի կաթողիկոսը կառուցել է Էջմիածնի Գայանե, իսկ Հասան Գնթունին՝ Անի քաղաքի մոտ գտնվող Օղուզլու գյուղի հոյաշեն եկեղեցիները:

Գնթունիները պատմության թատերաբեմից հեռացել են 930-ական թվականներին:

Գնթունիների զինանշանը փորագրված է նրանց տոհմական նստավայրում՝ Ապարան քաղաքում 4-րդ դարի սկզբներին կառուցված Քասաղի բազիլիկ տաճարի արևմտյան մուտքի բարավորի վրա:

Գնթունիների զինանշանային քանդակն իր նկարագրով կրկնում է Արարատյան թագավորների և Արտաշեսյանների զինանշանային պատկերագրության ձևը: Ինչպես առաջինները՝ ունի երկայնակի ուղղանկյուն կառուցվածք: Կենտրոնում, հավերժության և ութաթև աստղի փոխարեն, տեղադրվել է այդ ժամանակաշրջանին հատուկ հավասարաթև խաչ, որը վերցվել է կլոր շրջանակի մեջ և իր հերթին օղակվել է խաղողի ողկույզներով: Խաչի երկու կողմերում քանդակված են գլխով դեպի խաչը շրջված արու եղջերուներ: Եղջերուները քանդակված են քայլ անելու դիրքով. այդ են վկայում առջևի բարձրացրած և քայլի պատրաստ ոտքերը: Եղջերուները կանգնած են իրենց թիկունքից մինչև խաչի շրջանակի ներքին հատվածը ձգվող գծի վրա: Գծերի տակ, երկու կողմերում, դարձյալ փորագրված են խաղողի ողկույզներ:

Այս պատկերաքանդակի զինանշան լինելու լավագույն

հաստատումը եղջերուների մարմնի կենտրոնական մասում, մարմնից վերև կենաց ծառերի քանդակներն են:

Զինանշանի գծային ուղղանկյունը նույնպես եզրափակվում է կլոր շրջանակների մեջ փորագրված խաղողի ողկույզներով:

Գնթունիների զինանշանը իրականացված է խոր փորվածքով, կենդանիների և առարկաների իրատեսական պատկերագրությամբ:

ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Կամսարականները միջնադարի հայկական նշանավոր տոհմերից են: Ավանդությունը վկայում է, որ Կամսարականները սերում են պարթև կամ պահլավ Կարենյան տոհմից: Իբր պարսից Սասանյանները կոտորել են այդ տոհմի ներկայացուցիչներին, սակայն կոտորածից փրկված Պերոզամատի որդի Կամսարը հեռացել է Հայաստան, և Հայոց արքա Տրդատ Մեծը նրան պարգևել է արքունական Շիրակ և Երասխաձոր գավառները, և որ այս Կամսարի անունով էլ տոհմը կոչվել է Կամսարականք: Նախարար Կամսարի ավագ որդու՝ Արշավիր Ա-ի անունով Երասխաձոր գավառը, ինչպես նաև երբեմն տոհմը կոչվել են Արշարունիք: Ավանդությունը ավանդություն, սակայն եթե անգամ ճիշտ լինի Կամսարականների պարսկական ծագումը, այնուամենայնիվ, նրանք իրենց հայրենիքի՝ Հայաստանի իսկական զավակներն էին և վաղ միջնադարում իրենց գործուն ներդրումն են ունեցել ինչպես հայկական քաղաքակրթության, հայրենիքի պաշտպանության, այնպես էլ հայոց մշակույթի զարգացման գործում:

Կամսարական տոհմի ներկայացուցիչները բարեկամական սերտ կապերով էին կապված Արշակունի և Մամիկոնյան տոհմերի հետ և աչքի էին ընկնում արիությամբ: Նրանք հայոց բանակի կազմում մարտադաշտ էին հանում 600 հեծյալ զինվոր:

8-րդ դարի սկզբներից, Կամսարականները, որ հիմնականում հունական կողմնորոշում էին որդեգրել, քայլ առ քայլ սեղմվում են այս շրջանում հզորացող Բագրատունիների կողմից և, չկարողանալով հակադրվել նրանց, 8-րդ դարի վերջերին Շիրակն ու Արշարունիքը վաճառում են Բագրատունիներին ու հեռանում Փոքր Ասիա և Բյուզանդիա:

Կամսարականների տոհմի ներկայացուցիչներն աչքի են ընկել շինարարական ու մշակութանպաստ գործունեությամբ: Ներսեհ Գ-ն է

կառուցել Թալինի Կաթողիկե և Սուրբ Աստվածածին եկեղեցիները: Կամսարականներն են հովանավորել Մրենի տաճարի, Կամրջաձորի վանքի (նույնացվում է ժամանակակից Զոր գյուղի եկեղեցու հետ), Խծկոնքի համալիրի Սուրբ Կարապետ եկեղեցու, Ծպնի գյուղի եկեղեցիների (բոլորն էլ այժմ գտնվում են Թուրքիայի տարածքում) կառուցումը: Կամսարականներն են հիմնադրել Բագրատունյաց Հայաստանի ապագա մայրաքաղաք Անին:

Կամսարական տոհմի զինանշանի վրա ցուլի (գուցե՝ եզան) պատկերն է դաջված եղել (հատկանշական է, որ «կամսար» բառը պարսկերեն նշանակում է «եզան գլուխ ունեցող»): Մեզ հասած միակ օրինակը պահպանվել է Ծպնիի եկեղեցում: Այս եկեղեցին գտնվում է Կարսի մարզում, Նախիջևան գյուղի հյուսիս-արևմտյան կողմում: Այն և՛ արտաքուստ, և՛ ներքուստ խաչաձև գմբեթավոր եկեղեցի է: Կառուցվել է 7-րդ դարում: Եկեղեցիների այդ տիպին են պատկանում Արթիկի շրջանի Լմբատավանքը և Ապարանի շրջանի Լուսագյուղի Վերի վանքը:

Եկեղեցու ներսում այլ պատկերների թվում փորագրված է Կամսարականների զինանշան-հարքաքանդակը: Այն զբաղեցնում է շարաքարերից զգալիորեն մեծ մի ամբողջական քարի երեսը: Ցուլը պատկերված է կանգնած՝ գլխով՝ ձախ ուղղությամբ: Կենդանին հզոր կառուցվածք ունի, ողնաշարը ուղիղ ու ձիգ է, ոտքերը ամուր ու կորովի, գլխով շրջված է դեպի դիտողը: Արտաքին նշաններից երևում է, որ ցուլը ցանկացած վայրկյան պատրաստ է հարձակման ու հարվածի: Այդ են հաստատում աչքերի ուռած ելուստները, հուր ցայտելու պատրաստ ռունգերը, վզի ձգվածությունը, դեպի վեր ծռված առջևի ոտքը (ցուլը մարտից առաջ միշտ ոտքով փորում է գետինը) և ձգված պոչը: Ցուլի պատկերը շարժուն է, թափանցիկ, կենդանի, թեև քանդակագործը ոչ մի մանրամասն չի շեշտել, բացի կենդանու եղևնանախշ պարանոցից:

Որդեգրելով ցուլի պատկերը՝ Կամսարականները, հավանաբար, իրենց վերագրել են առասպելական ուժի, աննկուն կռվողի, ցանկացած նպատակ իրագործողի խորհրդանիշ-գաղափարներ, որոնք լիովին կարողացել են ապացուցել իրենց հայրենանվեր գործունեությամբ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Հայոց պատմական տոհմերից մեկին՝ Բագրատունիներին մեծ առաքելություն վիճակվեց: 9-րդ դարի 50-ական թվականների կեսերին Արաբական խալիֆայությանը ենթակա Հայաստանի կառավարիչ նշանակված Աշոտ Բագրատունին, հենվելով իր տոհմի ռազմական ուժի վրա, համախմբելով ազատատենչ իշխանական տները՝ 3 տասնամյակում քայլ առ քայլ գնաց դեպի անկախություն: Եվ վերջապես՝ 885թ. վերականգնեց 428թ. կորսված Հայաստանի անկախությունը և մեծ շուքով օծվեց Հայաստանի թագավոր:

Բագրատունիների հայոց թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ Գագիկ Ա թագավորի օրոք՝ 989-1020 թվականներին, երբ կրկին վերանվաճվեցին Դվինն ու Նախճավանը, և Երասխը կրկին սահման դարձավ Հայաստանի և Ատրպատականի միջև:

Սակայն 11-րդ դարի 20-ական թվականներից հետո իրադրությունը փոխվեց: Արևելքից եկել ու սպառնում էին սելջուկների հրոսակները, արևմուտքից նվաճողական առաջխաղացումն էին համառորեն շարունակում անհեռատես բյուզանդական կայսրերը, որոնք, փաստորեն, իրենց ձեռքով ավերում էին արևմուտքի ճանապարհը պաշտպանող վահանը՝ Հայաստանը: 1045թ. բյուզանդական կայսրը խաբեությամբ Կ. Պոլիս է հրավիրում Գագիկ Բ թագավորին, որ դիմագրավում ու հետ էր մղում բյուզանդական բանակներին, և գերում է նրան: Ընկնում է Բագրատունիների 160-ամյա թագավորությունը:

Բագրատունիների թագավորության տարիներին առաջացան Վասպուրականի, Կարսի, Սյունիքի, Լոռու թագավորությունները, Խաչեն-Փառիսոսի, Տարոնի իշխանությունները, որոնք ենթակա էին Բագրատունիների կենտրոնական թագավորությանը:

Բագրատունյաց Հայաստանը Միջին Արևելքի ամենածաղկուն երկրներից մեկն էր, առևտրական կապերի մեջ էր հայտնի գրեթե բոլոր երկրների հետ: Այստեղ կառուցվում էին նոր ու ամուր քաղաքներ, մշակույթի ու հոգևոր համալիրներ: 961 թ-ին մայրաքաղաք հռչակված Անին այդ ժամանակի աշխարհի ամենահզոր ու ամենաբազմամարդ քաղաքներից էր:

Հայտնի չէ, թե հնում, երբ Բագրատունիները հայոց Արշակունի թագավորների թագաղիրներն էին կամ Մարզպանական Հայաստանի կառավարիչները, ինչ զինանշան ունեին, բայց Հայաստանի թագավոր եղած ժամանակ նրանց զինանշանի վրա առկա են թե՛ առյուծի, թե՛ արծվի պատկերներ:

Բագրատունիների առյուծի պատկերով հնագույն զինանշանը գտնվում է Կարսի Առաքելոց եկեղեցու հարավային ճակատին: Առաքելոց եկեղեցին կառուցվել է Աշոտ Երկաթի եղբոր՝ Աբաս Բագրատունի թագավորի օրոք՝ 930-943 թվականներին: Առյուծի պատկերն իրականացված է հարթաքանդակի եղանակով քարի վրա փորված քառակուսու ներսում: Առյուծը գլխով ուղղված է դեպի աջ և նայում է դիտողին: Որպես իշխանության նշան՝ առջևի աջ թաթը բարձրացրած է վեր, պոչը՝ վեր տնկված: Թեև պատկերն իրականացված է առանց մանրամասների ընդգծման, այնուամենայնիվ, խոսուն է: Փաստորեն, լինելով Առաքելոց եկեղեցու պատին, ամենայն հավանականությամբ, զինանշանը պատկանում է Աբաս թագավորին:

Հաղարծին

Անի

Անիում գտնված սալաքարի վրա առյուծի պատկերը իրականացված է քանդակային եղանակով: Առյուծը գլխով ուղղված է դեպի աջ և բացարձակապես կրկնում է Կարսի քանդակը: Առավել մանրամասնորեն են քանդակված կենդանու կուրծքը, վիզը, դեմքը: Կուրծքը ուռցրած է, բաշը հարթ է, հոնքը հաստ ու ընդգծուն է: Ճակատին ռումբիկ է փորագրված, որ խորհրդանշում է իշխանապետ լինելը:

Հենց այս առյուծապատկերն է որպես Բագրատունիների խորհրդանիշ պատկերվել Հայաստանի Առաջին Հանրապետության և Հայաստանի Երկրորդ Հանրապետության զինանշաններին՝ վահանի աջակողմյան վերին հատվածում:

Անիում գտնվել են գլխով դեպի աջ ուղղված ևս երկու զինանշանային քանդակներ:

Վստահորեն կարելի է փաստել, որ Բագրատունիների կենտրոնական իշխանության զինանշանը գլխով դեպի աջ ուղղված առյուծի պատկերն է:

Արծվի պատկերով հնագույն զինանշանը ևս գտնվում է Կարսի Առաքելոց եկեղեցու գմբեթի խորշերից մեկում:

Զինանշան-արծիվը քանդակված է արձանային եղանակով և ունի ուղղահայաց կառուցվածք: Թռչնի թևերը հպված են մարմնին, կուրծքը դուրս ցցված է, վիզը թեքված է մի փոքր ձախ, գլուխը ցավոք, ջարդված է: Հզոր ճանկերի մեջ պոչին սեղմած պահում է ինչ-որ անորոշ կենդանու: Քանդակն իրականացված է թեփուկաքանդակային եղանակով:

Բագրատունիների անիական շրջանից հայտնի է զինանշանային մեկ այլ տարբերակ, որը գտնվում է Անիի Մայր տաճարի արևմտյան ճակատին: Այստեղ՝ կենտրոնական մասում, իրար զուգահեռ, երկու խորշերի գլխին, գրեթե նույն ոճով քանդակված են զինանշան-արծվի պատկերները: Թռչունն ունի հորիզոնական կառուցվածք, պատկերված է այն պահին, երբ երկնքից, թևաբախումով, բացված պոչով իջնում ու ճանկում է զոհին: Ամբողջ պատկերը շարժման մեջ է. հզոր թևերը ալիքաձև, ոլորուն ճախրում են օդում, մագիլները խրվել են աննշան ու անորոշ զոհի մարմնի մեջ ու սեղմվել են հզոր պոչին: Թռչնի գլուխը մի փոքր ձախ է թեքված եղել, որով որոշվում է նաև կրծքի ձախ ուղղվածությունը: Ինչպես և Կարսում, Անիի Մայր տաճարի երկու արծիվների գլուխներն էլ կոտրված են, որով զինանշանային այս անզուգական պատկերները որոշ չափով խամրում են: Զինանշանային արծվաքանդակները թեև զուրկ են մանրամասների ընդգծումից և

ընդհանրապես մշակված չեն, սակայն լավագույնս արտահայտում են հզոր թագավորների՝ Բագրատունիների կարգավիճակը. նրանք այնքան հզոր են, որ նրանց դեմ թշնամիներն աննշան ոչնչություն են: Բագրատունիների այս զինանշանը կերտվել է Գագիկ Ա թագավորի օրոք, երբ Բագրատունիները գտնվում էին փառքի գագաթնակետին, և նրանց զինանշանն էլ այդ է ապացուցում:



Անիի Մայր տաճարի զինանշանային պատկերի նմանությամբ՝ երկու նույնատիպ արծվապատկերներ են փորագրված Անիի միջնաբերդի պալատական եկեղեցու ներսում: Եկեղեցին կառուցել են Բագրատունիները՝ 10-11-րդ դարերում:

Ավելի ուշ Բագրատունիների զինանշանային պատկերները որդեգրեցին իրենց Բագրատունյաց տոհմից սերված համարող՝ նրանց իրավահաջորդ Զաքարյանները: Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի համար որոշ փոփոխություններով օգտագործվեց Կարսի Առաքելոց եկեղեցու արծվապատկերը, իսկ Վահրամյանները որդեգրեցին Անիի Մայր տաճարին գտնվող զինանշանը՝ դրանում որոշ հավելում կատարելով:



ԿԱՐՍԻ ԳԱԳԻԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

963 թվականին Աշոտ Գ Ողորմած թագավորի կրտսեր եղբայր Մուշեղ Բագրատունին իրեն հռչակեց Կարսի թագավոր՝ ընդունելով Անիի Բագրատունիների թագավորության գերագահությունը: Քաղաքական այս կազմավորումը գոյատևեց մինչև 1065 թվականը, երբ Գագիկ Կարսեցի Աբասյանը, վախենալով սելջուկ-թուրքերի հարձակումներից, Կարսի թագավորության տիրույթները հանձնեց Բյուզանդիային՝ փոխարենը ստանալով Ծամնդավ, Կեսարիա, Խավատանեք քաղաք-ամրոցները:

Կարսի թագավորությունն ընդգրկել է շուրջ 10 հազար կմ^2 տարածք. Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան մասը՝ Արաքս գետի վերին, Ախուրյան գետի վերին և միջին հոսանքները:

Կարսի թագավորության մայրաքաղաքը համահայկական նախկին մայրաքաղաք Կարսն էր: Կարևոր կենտրոններ էին նաև Կաղզվան և Կողբ քաղաքները: Զարգացած էին երկրագործությունը, լեռնագործությունը, գինեգործությունը, անասնապահությունը: Արդյունահանվում էր պղինձ, արծաթ, երկաթ, արճիճ, աղ:

Կարսի թագավորներ Մուշեղի և նրա որդի Աբասի գինանշանները հայտնի չեն, իսկ Գագիկ Աբասյանի գինանշանը պահպանվել է նրա իսկ հրամանով ընդօրինակված և այժմ Երուսաղեմում գտնվող

«Ավետարանի» 135 «բ» էջում պատկերված թագավորական ընտանիքի հագուստի վրա:

Գորգածածկ բազմոցին ծալապատիկ նստած են Գագիկ Աբասյան թագավորը, Գորանդուխտ թագուհին և Մարեմ արքայադուստրը:

Պատմական արժեք ներկայացնող այս նկարում թագավորը և նրա ընտանիքի անդամները ներկայացված են ոչ թե սովորական պալատական հանդերձանքով, այլ թագավորական պաշտոնական համազգեստով, որի վրա եղած պատկերները չէին կարող լինել ոչ այլ ինչ, քան զինանշաններ:

Գագիկ թագավորը կրում է կապույտ գույնի երկար պատմուճան՝ լայնաբերան թեզանիքով: Հագուստի վրա ոսկեթելով ասեղնագործված են կլոր մեդալիոններ: Պարզ երևում է իրանի մասում պատկերված շրջանակը: Այստեղ, ինչպես նաև կրծքի վերին հատվածում գտնվող շրջանակի մեջ, ոսկեթելով պատկերված են գլխով դեպի աջ դարձած առյուծներ: Կենդանու պոչը պատկերված է տնկված վիճակում և մեջքի վրայով հասնում է մինչև մարմնի կեսը:

Հետաքրքիր լուծում է տրված գլխի հատվածին. կենդանու գլխին պատկերված է եռաճյուղ թագ, որի կենտրոնական ճյուղն անբնական երկար ծայրով կեռվում և հասնում է մինչև պոչը: Այս մանրամասնը որոշ պատմաբանների ստիպել է այդ պատկերում տեսնել այծ-քոշի նկարը, որը հավաստի չէ: Առյուծի դնչից կախված է խաչ:

Գորանդուխտ թագուհու և Մարեմ արքայադստեր հագուստի վրա նույնպես կլոր շրջանակներ են պատկերված, իսկ նրանց մեջ գործված են դիմահայաց արծիվներ:

Գրեթե 200 տարի հետո նույնպիսի պատկերագրությամբ են ներկայացվել նաև Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Բ-ի և Կեռան թագուհու հագուստները, որը ևս հավաստումն է այն փաստի, որ Գագիկ Կարսեցի թագավորի հագուստի վրա զինանշան է գործված:



Անի քաղաքի պարսպի
վրա գտնվող զինանշանը

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Անին Հայաստանի մայրաքաղաքն է եղել 961-1045 թվականներին:

Անին կառուցվել է Ախուրյան և Անի գետերի միախառնման վայրում՝ կիրճերով պաշտպանված, ծովի մակարդակից 1500 մետր բարձրությամբ հրվանդանի վրա: Քաղաքի տարածքը Հայաստանի հնագույն բնակավայրերից է եղել: Այստեղ պահպանվել են կիկլոպյան պարսպի մնացորդներ, մ.թ.ա. 8–7-րդ դարերի դամբարաններ: Անիի ստորգետնյա քարայրներից մեկում գտնվել է մ.թ.ա. 1-ին հազարամյակի

բրոնզե ապարանջան, քաղաքի տարածքից հայտնաբերվել են Տիգրան Մեծի արծաթյա դրամներ:

Պատմիչներ Եղիշեն և Ղազար Փարպեցին Անին առաջին անգամ հիշատակում են 5-րդ դարում՝ որպես Կամսարական իշխանների ամրոց: 783 թվականին Բագրատունի իշխան Աշոտ Մսակերը Կամսարականներից գնել է Արշարունիք և Շիրակ գավառները՝ Անի ամրոցի հետ:

Կամսարականների շրջանին են պատկանում Աղջկաբերդի և Անիի միջնաբերդի կառույցները: Միջնաբերդը շրջափակված էր բուրգավոր պարիսպներով: Հետագայում դրանք Բագրատունիների կողմից ներառվել են ընդհանուր պաշտպանական համալիրի մեջ:

953 թվականին Աբաս Բագրատունուց գահը ժառանգած Աշոտ Գ-ն, 961 թվականին Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի ձեռամբ՝ մեծ հանդեսով, բազմաթիվ հյուրերի ու հայոց ողջ բանակի ներկայությամբ թագադրվեց Անի քաղաքում ու Անին հայտարարեց երկրի մշտական մայրաքաղաք:

992 թվականին, Գագիկ Ա թագավորի օրոք, Ամենայն հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին տեղափոխվեց մայրաքաղաք Անի: Եվ Անին ստացավ այնպիսի դեր, ինչպիսին ունեին քրիստոնեական Հայաստանի մայրաքաղաքներ Վաղարշապատն ու Դվինը:

Աշոտ Գ Ողորմածը 963-964 թվականներին կառուցեց քաղաքի ներքին բուրգավոր ու աշտարակավոր պարիսպը: Նրա օրոք անցկացվեց քաղաքի ջրմուղը, կառուցվեցին պալատի որոշ հատվածները: Մայրաքաղաք հայտարարվելուց ընդամենը երկու տասնամյակ հետո Անին արդեն տարածվում էր միջնաբերդից հյուսիս-արևելք ընկած սարահարթի վրա, և Աշոտ Ողորմածի որդի ու հաջորդ Սմբատ

Տիեզերակալը ութ տարվա ընթացքում կառուցեց 2,5 կմ երկարությամբ արտաքին հզոր պարիսպները, ամրացրեց ու ամբողջացրեց Աղջկաբերդի, Անիի միջնաբերդի, Ծաղկոցաձորի, Գլիձորի պարսպահատվածները: Միաժամանակ ավարտվեց պալատի ամբողջացումը, կառուցվեցին 17 մուտք-դարբասները, Ախուրյանի կամուրջները, իջևանատներ, ամբողջական թաղամասեր ու փողոցներ, բազմաթիվ եկեղեցիներ (Մայր տաճարը, Գագկաշենը, Առաքելոցը, Սուրբ Փրկիչը և այլն), իշխանական ապարանքներ, հիվանդանոցներ, ստորգետնյա քարտուններ: Ամրացնելով Անին՝ Բագրատունիները քաղաքը ևս շրջապատել էին պաշտպանական ամրոց-կայաններով (Մաղասաբերդ, Տիգնիս):

1045 թվականին՝ Բագրատունիների անկումով, դադարեց նաև մայրաքաղաքի հետագա բարգավաճ կյանքը: Անին, թերևս, մի թռիչք էլ ունեցավ Զաքարյանների իշխանապետության մայրաքաղաք եղած ժամանակ (1201-1236 թթ.):

Թշնամիների մշտական ավերածությունների հետևանքով Անին ավերվեց, դատարկվեց ու մոռացվեց: Այսօր Հայաստանի երբեմնի շքեղաշուք մայրաքաղաքի նույնքան շքեղ ավերակները մնում են Թուրքիայի բռնազավթած տարածքում՝ Արաքսի մյուս ափին:

10-11-րդ դարերի այդ ժամանակահատվածում, լինելով աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը համահայոց մայրաքաղաքը՝ Անին, պիտի ունենար զինանշան:

Սմբատ Տիեզերակալը կառուցելով արտաքին մեծ պարիսպները գլխավոր դարբասի մոտ՝ պարսպի վրա տեղադրել տվեց զինանշանի պատկերը:

Այս զինանշանային պատկերը բազմաստիճան ու բարդ է: Ներքևի կամ առաջին աստիճանը կազմում է բարձր շրջանակով ընդհանուր պատից առանձնացված երկհարկ եկեղեցատիպ ուղղանկյուն շրջանակը: Առաջին հարկի կամ մեծ ուղղանկյան մեջ արձանային եղանակով քանդակված է գլխով դեպի ձախ ուղղված հովազ՝ վարգի պահին: Հովազի մարմինը երկայնակի ձգված է, երկար վիզը ձգված է վեր, մեջքը ճկված է ներքև, առջևի ձախ թաթը հետ է ընկած, հետևի նույն ոտքը՝ առաջ, որով ապահովված է հավաստի վարգը, պոչը՝ մարմնին զուգահեռ, ձգված է օդում: Քանդակն իրականացված է հարթ մշակումով: Շրջակալի երկրորդ հարկի քարի վրա կլոր շրջանակ-փոս է փորված, ինչը փոխարինում է գնդին՝ իշխանության նշանին: Երկրորդ հարկի շրջակալի կենտրոնից դեպի վեր,

ինչպես եկեղեցու գմբեթի վրա, գունավոր, ռոմբավոր խաչ է դրված: Խաչը հենված է եռանկյունաձև ռոմբի վրա: Խաչի կենտրոնական ռոմբի կենտրոնում ևս շրջանակ-փոսիկ է փորված՝ որպես իշխանության նշան:

Ամբողջ պատկերն իր համաչափության մեջ եկեղեցու կերպար ունի:

Անի քաղաքի զինանշանին հետագայում էլ մնացել է հովազը: Այդ է ապացուցում 1273 թվականին Անի քաղաքում պատրաստված փոքրագրարդ գրակալի վրայի հովազի պատկերը: Կենդանին այստեղ գլխով ուղղված է դեպի աջ և դարձյալ պատկերված է վարգի պահին: Գլուխը ուղղահայաց դիրքով է, վզի գնդավոր օղակը, ինչպես նաև առջևի աջ թաթի վրա պահված գունդը, իշխանության նշան են: Հովազի մեջքին հենված հիմքի վրա փորագրված է շրջանակավոր վարդյակ, որ փոխարինում է կենաց ծառին և խորհրդանշում է հավերժությունը:



ԿՅՈՒՐԻԿՅԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հայոց արքա Աշոտ Գ Ողորմածի կրտսեր որդի Գուրգենը (նրա անունը տեղի բարբառով հնչել է նաև «Կյուրիկե», որից էլ՝ տոհմանունը) 970 թվականին հիմնադրեց Կյուրիկյան թագավորությունը, որն ընդգրկում էր Գուգարաց աշխարհի արևելյան գավառները, հիմնականում՝ Տաշիրն ու Ձորափորը: Ինչպես Գուրգենը, այնպես էլ նրա հաջորդներն ընդունել են Բագրատունիների կենտրոնական իշխանության գերագահությունը:

Թագավորության մայրաքաղաքն սկզբում Շամշուլդե բերդաքաղաքն էր, որը մինչ այդ էլ Գուգարաց իշխանի կենտրոնատեղին էր: 1065 թվականին Կյուրիկյանները տեղափոխվեցին Լոռե բերդաքաղաք, որը դարձավ թագավորության նոր մայրաքաղաքը:

10-12-րդ դարերում Կյուրիկյան թագավորության տարածքում կառուցվեցին Կայան, Լոռե, Մահկանաբերդ, Գագ բերդերը:

Բագրատունիների կենտրոնական (1045թ.) և Կարսի (1065թ.) թագավորությունների անկումից հետո Կյուրիկյանների թագավորությունը Բագրատունյաց միակ իշխանությունն էր:

1113 թվականին Կյուրիկյան գահակալներ Աբաս Ա-ն ու Դավիթը կորցրեցին կենտրոնական իշխանությունը, թողեցին Տաշիրը և տեղափոխվեցին Տավուշ ու Մածնաբերդ՝ հիմնադրելով նույնանուն փոքրիկ իշխանությունները:

Կյուրիկյանների մշակութային կենտրոններ Սանահինն ու Հաղբատն իրենց գործունեությամբ համահայկական նշանակություն ունեին:

Կյուրիկյան թագավորական տան զինանշանը պահպանվել է Լոռի բերդը եզերող Ձորագետ գետի վրա կառուցված և հետագայում ավերված կամրջի միջին հենարանի վրա: Լոռե բերդաքաղաքը, ամենայն հավանականությամբ նաև Ձորագետի կամուրջը, կառուցվել են Կյուրիկյան Դավիթ թագավորի օրոք (966-1048թթ.):

Բազալտե շարաքարը, որի վրա պատկերված է զինանշանը, սովորական շարաքարի մեկուկես մեծության է: Սրա վրա քանդակագործական եղանակով պատկերված է գլխով դեպի ձախ դարձած առյուծ, որը նայում է դիտողին: Առյուծի երախը բաց է, ականջները՝ վեր ցցված: Դեմքի արտահայտությունը անհանգիստ է, լարվածություն է արտահայտում: Այդ են ցուցանում նաև փոքր-ինչ կքած առջևի մեկ, հետևի երկու ոտքերը, և հետևի ոտքերի արանքով դուրս եկած ու մարմնի վրայով վեր ցցված պոչը: Թվում է՝ կենդանին ընթացքի պահին ինչ-որ բանից անհանգստացած շրջվել ու լսողություն դարձած քարացել է տեղում:

Այս զինանշանը Կյուրիկյան թագավորության տան զինանշանն է, պատրաստվել է այն ժամանակ, երբ Բագրատունիների իշխանությունն արդեն չկար: Իր վրա կրելով Բագրատունիների հիմնական զինանշանի պատկերը, միաժամանակ չշփոթելու համար՝ առյուծը պատկերվել է մայր զինանշանին հակառակ դիրքով՝ գլխով դեպի ձախ:

Պատկերը զինանշանային է: Եվ դրա վկայությունը վեր ցցված պոչի ծայրի գնդաձև մշակումն է, որը ստույգ իշխանության նշան է:

12-րդ դարի վերջին քառորդում՝ հետթագավորության շրջանում, այս թագավորական ընտանիքի շառավիղները գրեթե միաժամանակ երկու տարբեր կառույցների վրա թողել են զինանշանային պատկերներ:

1170-ական թվականների վերջերին Կյուրիկյան Աբաս թագավորի կինը՝ Զաքարե և Իվանե Զաքարյանների քույրը՝ Վանենին, ամուսնու հիշատակին Դեբեդ գետի վրա կառուցված կամրջի եզրակողերի չորս անկյունները ձևավորել է կատվազգիների ընտանիքի արձանային քանդակներով: Այս քանդակներից մեկը, որ թաթերը կախել է ցած և միացրել իրար, հաստատապես առյուծ է, մյուսները, թվում է՝ հովազ կամ վագր են: Ինչպես առյուծը, հովազը, այնպես էլ վագրերը հարազատ են Վանենու և՛ ամուսնու, և՛ հայրական ընտանիքների զինանշանային պատկերասրահին: Բագրատունի Կյուրիկյաններն

առյուծապատկեր, հովազապատկեր (Անիի խորհրդանիշը), Զաքարյան-ները՝ վագրապատկեր (Մակարավանք) զինանշաններ ունեն:

1181-1184 թվականներին կառուցվել է Սանահինի Ամենափրկիչ եկեղեցու գավիթը: Գավթի չորս սյուների կառուցումը հովանավորել են Կյուրիկե Բ թագավորի (1145-1170 թթ.) դուստրերը՝ Մարիամը, Բորինան, Ռուսուդանը և Կյուրիկե Բ-ի կնոջ՝ Թամարի հորաքույր Ռուսուդանը:

Հորաքույր Ռուսուդանի հովանավորությամբ կառուցված սյան խոյակի զամբյուղը չորս անկյուններից երկուսում (խոյակի քառակուսու եզրերում) ձևավորված է կենդանիների արձանային եղանակով պատրաստված գլուխներով, որոնցից երկուսը կատվազգիների ընտանիքին են պատկանում: Կլոր գլխով, փոքրիկ ականջներով, նեղ, շեղ աչքերով, բարակ քթով կենդանին հովազ կամ էգ վագր է հիշեցնում:

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Արծրունիները Հայկական լեռնաշխարհի բնիկներ են, համաձայն Արարատյան թագավորության ժամանակաշրջանի արձանագրությունների՝ սերվում են Արծունիունի տոհմից, որն ապրում էր Վանա լճի արևելյան կողմում՝ Տոսպում: Հետագայում նրանց է անցել նաև Աղբակը, իսկ ավելի ուշ Արծրունիները միավորվելով Մարդպետական տոհմի հետ՝ դարձել են Հայաստանի հզորագույն իշխանատոհմերից մեկը: Արշակունյաց թագավորական «Գահնամակի» համաձայն՝ Արծրունիներն զբաղեցնում էին երեք բարձ (Բագրատունի և Սյունի տոհմերից հետո):

Արծրունիներն իրենց հզորությունն օգտագործելով՝ գերագահություն ձեռք բերեցին ամբողջ Վասպուրական

աշխարհում, և նրանցից վասալական կախվածության մեջ էին Ռշտունի, Անձևացի, Ամատունի, Ակեացի, Տրպատունի տոհմերը, որոնք ևս հետագայում սկսեցին ներկայանալ որպես Արծրունիներ: Սրանով է բացատրվում այն փաստը, որ 850-ական թվականներին Արծրունիները բաժանվում էին 16 ճյուղի:

Արծրունիները իրենց կարողություններով մշտապես եղել են հայրենյաց նվիրյալներ:

Ավարայրի ճակատամարտում հայոց բանակի կենտրոնական զորախմբի հրամանատարը Ներշապուհ Արծրունին էր: Նրանք ակտիվորեն մասնակցել են 480, 774-ական թվականների ազատագրական պատերազմներին, իսկ 851 թվականին Բագրատունիների հետ գլխավորել են Արաբական խալիֆայության դեմ ուղղված ժողովրդական ապստամբությունը:

Արծրունիները, մասնակցելով Բագրատունիների կողմից Հայաստանի անկախ պետականության վերականգնման գործին, միաժամանակ հանդես բերեցին անջատողական դրսևորումներ և 908 թվականին ստեղծեցին Վասպուրականի անկախ թագավորությունը, որն ընդունելով Բագրատունիների գերագահությունը՝ գոյատևեց մինչև 1021 թվականը: Վասպուրականում հաջորդաբար թագավորել են Գագիկ-Խաչիկը, Աշոտ-Դերենիկը, Աբուսահլ-Համազասպը, իսկ 968 թվականից՝ միաժամանակ Աշոտ-Սահակը, Գագիկ-Խաչիկը, Սենեքերիմ-Հովհաննեսը:

Սելջուկ-թուրքերի հարձակումների և Բյուզանդիայի ճնշման հետևանքով Սենեքերիմ-Հովհաննեսը 1021 թվականին Վասպուրականի ազատանու և բնակչության մի մասի հետ գաղթել է Փոքր Հայք, որտեղ կազմավորել է Արծրունիների ավատական իշխանությունը՝ Սեբաստիա կենտրոնով: 1080 թվականին Արծրունիների այս իշխանապետությունը ևս ընկավ:

Արծրունիների որոշ ներակայացուցիչներ հաստատվեցին Կիլիկիայում, մի մասը շարունակում էր գոյատևել Վասպուրականում, ևս մեկ ճյուղ հաստատվեց Հյուսիսային Հայաստանի Կայան գավառում՝ հիմնելով Մահկանաբերդի Արծրունյաց իշխանությունը և ծառայության անցնելով Վրաց արքունիքում՝ հասավ բարձրագույն պաշտոնների: Ավելի ուշ այս տան ներկայացուցիչները խնամիանալով Զաքարյանների հետ՝ շարունակեցին ազդեցիկ դիրք գրավել Զաքարյանների իշխանապետությունում: Թիֆլիսի ամիրապետի և արքունի գանձարանապետի տեղակալի պաշտոններն Արծրունիների ժառանգական պաշտոններն էին:

1250 թվականին՝ Ավագ Զաքարյանի մահից հետո, Սաղուն Արծրունին դարձավ Վրաստանի և Հայաստանի աթաբեկ և ամիրսպասալար: Այս պաշտոնում նրան փոխարինեց որդին՝ Խուբլուբուղան, որը հայտնի վերջին Արծրունի իշխանապետն է:

Արծրունիների տոհմից սերված հոգևորականները 1113 թվականից ժառանգաբար նստել են Աղթամարի կաթողիկոսության գահին: Մատենագիրների կողմից հիշվում են այլ Արծրունի հոգևորականներ ևս:

Արծրունիների հնագույն շրջանի, վաղ միջնադարյան տոհմաճյուղերի, թագավորության շրջանի զինանշանների մասին տեղեկություններ հայտնի չեն:

Զինանշանային պատկերներ պահպանվել են Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի կողմից Աղթամար կղզում 915-922 թվականներին Մանուել ճարտարապետի ձեռքով կառուցված Սուրբ Խաչ եկեղեցու արտաքին պատկերաքանդակներում:

Աղթամարի տաճարի արևմտյան ճակատին, կենտրոնական պատուհանի աջ կողմում պատկերված է Գագիկ Արծրունի թագավորի բարձրաքանդակը: Նա ձախ ձեռքով բռնել է տաճարի մանրակերտը, որը նվիրաբերում է Քրիստոսին:

Արծրունյաց թագավորի հանդերձանքի մանրամասները վերարտադրված են ճշգրիտ: Թագավորը հագած է շրջանակներով ձևավորված պատմուճան: Խիստ կարևոր է թիկնոցը, որի վրա մեդալիոնների մեջ փորագրված են գլխով դեպի աջ դարձած արծիվներ: Թիկնոցի վրայի արծիվների պատկերներն ապացույցն են այն փաստի, որ Գագիկ թագավորի զինանշանը եղել է արծիվը, այլ պարագայում անհնար է, որ այն պատկերվեր թագավորի թիկնոցի վրա:

Եկեղեցու արևելյան ճակատին պատկերված է խնջույքի տեսարան. կենտրոնում նստած է Գագիկ Արծրունի արքան, Գագիկ թագավորից ձախ, խաղողի երկրորդ որդագալարի մեջ պատկերված է ութաթև աստղի վրա հպարտորեն կանգնած վեհատեսք արծիվ: Արծրունի ինքնանվան հիմքում ընկած է «արծիվ» բառը: Եվ արքայի կողքին պատկերված արծվի քանդակն ինքնին հաստատում է, որ գործ ունենք արքայատան զինանշանային պատկերի հետ: Թռչունը գլխով դարձած է դեպի աջ՝ դեպի Գագիկ թագավորը, թևերը սեղմված են մարմնին: Երևացող թևը ձևավորված է երկու ուղղահայաց, երկու զուգահեռ փոսիկներով: Երկու փոսիկով է ձևավորված դեպի ներքև թեքված պոչը: Մարմնի վիճակն այնպիսին է, որ երևում են կուրծքը, երկրորդ թևի ուսագոտին և երկու ոտքերը: Կտուցը սուր է, աչքը՝ կրկնակի փոսիկով, ավելի ընդգծուն է դարձված:

Թեև պատկերն անպաճույճ ու անզարդ է, սակայն իր վեհատես անմիջականությամբ խիզախություն, նվիրում, սլացք, արագություն, ամենատեսություն է ցուցանում: Արծիվը կանգնած է ութաթև արևհավերժություն արտահայտող աստղի վրա, որը ևս հաստատում է դրա զինանշանային պատկեր լինելը:

Թեև Արծրունիների ինքնանվանումը հուշում է, որ վերջիններիս խորհրդանիշի հենքը կարող է առաջին հերթին միայն արծիվը լինել, սակայն Աղթամարի տաճարի զինանշանային քանդակներում առկա առյուծապատկերներն այդպես կարծելու հիմք չեն տալիս: Տաճարի արևելյան ճակատին, Գագիկ թագավորի ձախ կողմում, արծվի պատկերին համաչափորեն հակակշիռ, աջ կողմում պատկերված է առյուծ:

Նույն արևելյան ճակատին, եռանկյունաձև խորշի երկու

կողմերում պատկերված են դիմահայաց առյուծներ: Այս քանդակները զինանշանային հենք ունեն և նման են մանրանկարի պատկերին: Այստեղ կենաց ծառի դերն իր վրա է վերցրել եռանկյունաձև խորշը:

Գագիկ Արծրունի թագավորը, որպես երկրորդ ստացող, 10-րդ դարի սկզբին ձեռք է բերել 862 թվականին ստեղծված և պատկերագրված «Ավետարան», որը 912 թվականին նրա կինը՝ Մլքե թագուհին, նվիրել է Վարագի Սուրբ Աստվածածին եկեղեցուն: Այն պատմագիտությանը հայտնի է որպես «Մլքե թագուհու Ավետարան»:

Այս «Ավետարանի» խորաններից մեկի վրա պատկերված է զինանշան: Խորանի կապույտ ֆոնի վրա ոսկեգույնով պատկերված են դիմահայաց առյուծներ, իսկ նրանց միջև տեղադրված է կենաց ծառ: Առյուծներից յուրաքանչյուրի առջևի մեկ թաթը դրված է կենաց ծառի վրա: Նրանց մեջքի մասում գունդ է պատկերված, որն իշխանության խորհրդանիշ է: Առյուծներից յուրաքանչյուրի տակ ոսկեգույնով լցված շրջան է նկարված, որը նույնպես իշխանության խորհրդանիշի հաստատումն է: Առյուծները պատկերված են գլուխները բարձր պահած դիրքով, իսկ պոչերն իջած են ցած, որ նշան է կենդանիների հանդարտ, հանգիստ, սեփական արժանապատվության մեջ համոզված լինելու:

Հնարավոր է, որ Արծրունիների ճյուղերից մեկը առյուծապատկերը որդեգրել է որպես խորհրդանիշ-զինանշան, ինչպես նաև 862 թվականի «Ավետարանը», ամենայն հավանականությամբ, ստեղծվել է Արծրունիների միջավայրում և մանրանկարի զինանշանային պատկերը պատկանում է նրանց: Ամենայն հավանականությամբ, այս մանրանկարն իր գունային լուծմամբ արտացոլում է Արծրունիների պետական դրոշի մանրակերտը:

ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

10-րդ դարի 80-ական թվականներին թշնամական հարձակումներից ժամանակավորապես թուլացել էր Բագրատունիների իշխանությունը: Երկիրը ցնցվում էր ոչ միայն արտաքին թշնամիների հարձակումներից, այլև ներքին կենտրոնախույս ուժերի ինքնիշխանական ձգտումներից:

Ինքնօրինության էին ձգտում նաև Սյունիքի գահերեց տերերը: Եվ ահա 987 թ-ին Սյունիքի գահերեց իշխան Սմբատ Ա Սահակյանը Սյունիքը հռչակում է անկախ թագավորություն: Նորահաստատ թագավորությունն ընդգրկում էր Սյունիքի նահանգի հարավային հողերը: Թագավորության սահմաններից դուրս մնացին Սևանա լճի ավազանը և Երնջակ գավառը: Առաջինը մասն էր Բագրատունիների կենտրոնական իշխանության, իսկ Երնջակը կցված էր Գողթնի ամիրայությանը: Անկախության հռչակման հաջորդ տարվանից Սմբատ Ա Սահակյանն ընդունեց Բագրատունի Սմբատ Բ Տիեզերակալի գերագահությունը: Սմբատ Բ Տիեզերակալի հաջորդը՝ Գագիկ Ա-ն, Սյունիքի թագավորությունից անջատեց Վայոց Ձոր, Ճահուկ գավառներն ամբողջությամբ և Ծղուկք գավառի հյուսիսային մասը, որոնց փոխարեն Սյունիքի թագավորությանը տվեց Գողթնի ամիրայությունից գրավված Երնջակ գավառը: Այսպիսով, Սյունիքի թագավորությունը հիմնականում ամփոփվեց պատմական նահանգի հարավային մասում և զբաղեցնում էր մոտ 5500 քառակուսի կիլոմետր տարածք: Սյունիքի թագավորության մայրաքաղաքը Կապան քաղաքն էր, հոգևոր կենտրոնը՝ Տաթևի վանքը:

Սյունիքի թագավորների հովանավորությամբ՝ երկրամասում շինարարական մեծ գործունեություն ծավալվեց. ամրացվեցին բերդերը, կառուցվեցին հոգևոր-մշակութային օջախներ, գրվեցին ու ընդօրինակվեցին հարյուրավոր արժեքավոր ձեռագրեր: Միայն Տաթևի վանքում 11-րդ դարի կեսերին գործում էին շուրջ հազար միաբաններ, նշանավոր վարդապետներ, իմաստասերներ, երաժիշտներ, արհես-

տավորներ: Այդ տարիներին են կառուցվել Վաղաղնի Սուրբ Ստեփանոս (1000թ.), Սուրբ Կարապետ (1006թ.), Վահանավանքի Սուրբ Աստվածածին (1086թ.) եկեղեցիները և բազմաթիվ այլ կառույցներ:

Սյունիքի թագավորները, ապավինելով իրենց բարձրաբերձ լեռներին երկար ժամանակ պահպանում էին իրենց անկախությունը: Բայց սելջուկ-թուրքերի անընդմեջ հարձակումները երկրամասը զրկեցին պաշտպանական կառույցներից: Ընկան ու ավերվեցին Կապանը, Որոտնաբերդը, Բղենը, Կաքավաբերդը, Գրիամը, Գեղին, Բաղաբերդը: Գանձակի թուրք ամիրա Ելտկուզի հրոսակները Բաղաբերդում այրեցին տասը հազար ձեռագիր մատյան: 1170 թվականին իրականացված այս բարբարոսությունը հայկական մշակույթի առաջին մեծ եղեռնն է: Այդ նույն՝ 1170 թվականին, ելտկուզյան թուրքերի հարվածների տակ թագավոր Հասան Գեռաքարեցին հեռացավ Հայրենի Խաչեն ու ընկավ Սյունիքի թագավորությունը, որ 125 տարով ավելի պահպանեց իր անկախությունը, քան Բագրատունիների կենտրոնական թագավորությունը:

Սյունիքի թագավորների զինանշանների մասին գրավոր տեղեկություններ հայտնի չեն: Սակայն զինանշանային երկու պատկեր



պահպանվել է Վայոց Ձոր գավառի Եղեգիս ավանի հյուսիս-արևելյան կողմում կառուցված Ցաղաց քար համալիրի Սուրբ Կարապետ եկեղեցու պատերին:

Շքամուտքի վերնամասում տեղադրված է եղել մի հոյակապ արծվաքանդակ: Արծիվը պատկերված է բացված թևերով, պոչի վրա հենված: Ուռուցիկ կուրծքը ձևավորված է թեփուկաքանդակներով, թևերը՝ զուգահեռ գծերով, որոնց միջնամասերը փոսիկներով բաժանված են մանրիկ մասերի: Թռչունի հզոր պոչը հովհարաձև բացված է և պատկերված է զուգահեռ փոսիկներով: Արծիվը մագիլները խրել է գառան ողնաշարի մեջ: Քանդակագործը իրատեսորեն է պատկերել ոտքերը ցավից կծկած գառան մարմինը: Բազալտ քարը հոյակապ պահպանել է արձանագործական այս պատկերի բոլոր մանրամասները: Ցավոք, զինանշանակիր քարը տեղից ընկել է, և արծիվը կորցրել է գլուխը, մասամբ կոտրվել է նաև գառան գլուխը: Չնայած այս կորուստներին՝ զինանշանային այս պատկերը հայ արձանագործության լավագույն աշխատանքներից մեկն է:

Նույն եկեղեցու հյուսիսային ճակատամասում ագուցված է զինանշանային ևս մեկ տարբերակ. հզոր առյուծը՝ հենված հետևի ոտքերի վրա, առջևի թաթերը սեղմել է ցուլի մեջքին ու մաշկազերծում է վերջինիս: Իր վախճանի հետ համակերպված՝ ցուլը տառապագին ծալել

է առջևի ոտքը՝ ի նշան պարտության, և խոճուկ հայացքը հառել է դիտողին: Առյուծը նույնպես հայացքը հառել է դիտողին. աչքերի կատաղի արտահայտությունը, բացված երախը՝ սեղմված ատամներով, ցույց են տալիս առյուծի հաստատակամությունը, ուժը, թշնամուն առյուծաբար հաղթելու վճռականությունը: Արձանային այս քանդակը, որի օրինակով շուրջ երկու դար անց Գեղարդի եկեղեցու ճակատին Զաքարյանները ձևավորեցին իրենց զինանշանը, հայկական բոլոր զինանշանների քանդակներից ամենամեծն է, ինչպես նաև ամենաիրատեսականներից մեկը:

Զինանշանային երկու տարբերակներում էլ ցուցադրված է Սյունյաց տերերի առասպելական քաջությունը, արիական գերազանցությունը թշնամիների և հակառակորդների նկատմամբ: Այդ են հաստատում ինչպես արծիվը, այնպես էլ առյուծը, որոնք հաղթում են թշնամական ուժերին:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Մայր Հայաստանում կորցնելով պետականությունը՝ հայերի հոծ զանգվածները տեղաշարժվեցին Փոքր Ասիայի արևմտյան մասերը և հիմնականում հաստատվեցին դեռևս Տիգրան Մեծի ժամանակներից հայերով բնակեցված Դաշտային Կիլիկիայում ու Լեռնային Կիլիկիայում: Ու երբ այս նոր տարածքում հայկական էթնոսը հասավ գերիշխանության, անհրաժեշտություն դարձավ հայկական պետականության ստեղծումը:

Կիլիկիայի հայկական պետությունը ստեղծվեց 11-րդ դարի վերջին քառորդում՝ բյուզանդական և սելջուկյան նվաճողների դեմ հայերի ազատագրական պայքարի շնորհիվ: Ապրել է զարգացման երկու ժամանակաշրջան՝ մեծ իշխանության (1080-1198թթ.) և թագավորության (1198-1375 թթ.):

Կիլիկյան Հայաստանը գտնվում էր Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում, Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան կողմում: Տարածքը մոտ 40 հազար քառակուսի կիլոմետր էր: Հարավից Կիլիկյան Հայաստանը շուրջ 500 կմ երկարությամբ ողողում էին Միջերկրականի ջրերը:

Մեծ իշխանության հիմնադիրը Բագրատունիների և Արծրունիների ազգական Ռուբեն Առաջինն էր, իսկ թագավորությանը՝ Լևոն Բ Մեծագործը:

Լևոն Ա Մեծագործի թագադրման արարողությունը տեղի ունեցավ 1198 թվականի հունվարի 6-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրը, Տարսոն քաղաքի Սուրբ Սոֆիայի մայր տաճարում: Թագադրության հանդեսին ներկա էին Բյուզանդիայի, Գերմանիայի Սրբազան կայսրության, Բաղդադի խալիֆայի, հարևան այլ երկրների, Մեծ ու Փոքր հայոց պատվիրակությունները, Տարսոնի հունաց պատրիարքը, Ասորիքի ու Հայոց կաթողիկոսները, բարձրաստիճան հոգևոր այլ գործիչներ, հայոց զորաբանակը, բազմահազար ժողովուրդ: Լևոն Ա-ն օծվեց «Թագավոր ամենայն Հայոց, և նահանգին Կիլիկէացոց, և Իսավոնից»:

Կիլիկյան Հայաստանի պետականությունը շուրջ 300 տարի Փոքրասիական այս տարածաշրջանում հայամտածողության, հայապահպանության, հայ մշակույթի վերակերտման օազիս դարձավ:

Կիլիկիայի հայկական իշխանապետության իշխանները, անշուշտ, ունեին իրենց զինանշանները, սակայն զինանշանների առավել հավաստի օրինակներ պահպանվել են Կիլիկիայի թագավորական շրջանից՝ հիմնականում այս շրջանում հատված հայկական հայատառ դրամների վրա:

Կիլիկիայի հայոց թագավորության հիմնադիր Լևոն Առաջինը (1198-1219թթ.) իր իշխանության օրոք հատված արծաթյա հայկական երկդրամյանի վրա ընտրել է թագակիր առյուծի պատկերը: Առյուծը գլխով դեպի ձախ է դարձած և նայում է դիտողին: Առյուծի մարմնի կենտրոնական մասում, աջից ձախ՝ վերից վար իջնող խաչ է պատկերված: Խաչի պատկերը գծված է վերևում կարճ, ներքևում՝ երկար հորիզոնական երկու գծերով:

Վատիկանի թանգարանում են գտնվում Կիլիկիայի Լևոն Ա թագավորի կնիքները:

Դրանցից մեկի վրա պատկերված է գահին բազմած Լևոն Ա թագավորը: Պատմուճանի վրա կրում է արքայական թիկնոց, որի վրայի կլոր մեդալիոնների մեջ առյուծներ են պատկերված: Որպես արքայական խորհրդանիշ՝ Լևոն Ա-ն աջ ձեռքում բռնել է խաչանիշ գունդը, իսկ ձախում՝ շուշանագլուխ մականը:

Մյուս կնիքի մեդալիոնի մեջ պատկերված է գլխով դեպի աջ դարձած թագակիր առյուծ: Առյուծը հայացքն ուղղել է դիտողին և թվում է, թե ավելի շատ տղամարդու դեմք ունի: Առյուծի պոչը S տառի տեսքով տնկված է վեր և ավարտվում է սրածայր զարդանշանով: Առյուծը առջևի աջ թաթով մարմնի վրա պահում է խաչակիր գավազան, որն իշխանության նշան է:

Փաստորեն, այս առյուծապատկերը Լևոն Ա թագավորի զինանշանն է:

Լևոն Առաջինը, որպես պետության խորհրդանիշ, օգտագործել է նաև երկառյուծ պատկերագրությամբ զինանշան: Շրջանակի ներսում, հետևի և առջևի թաթերով շրջանագծին հենված՝ պատկերված են երկու առյուծներ, որոնք գլխով շրջված՝ նայում են իրար: Երկու առյուծներին բաժանում և նրանց պոչի մասից սկսվում ու մինչև շրջանակի եզրը ձգվում է խաչը, որը դարձյալ հորիզոնական երկու գծով է ձևավորված: Այս պատկերը նման է Արտաշեսյանների երկարծիվ զինանշանին: Այստեղ ութաթև աստղին փոխարինում է խաչը:

Լևոն Առաջինի երկդրամյանի պատկերագրությամբ՝ գլխով ձախ դարձած առյուծի պատկերով, զինանշան է օգտագործել նաև Լևոն Երկրորդը (1270-1289թթ.): Սակայն այս դեպքում առյուծը թագակիր չէ:

Հայ արքաներից ուրիշ որևէ մեկը Կիլիկիայի հայոց Լևոն Բ թագավորի այն երջանկությունը չի ունեցել, որ իր ժամանակակից մանրանկարչի կողմից մի քանի անգամ պատկերվի: Մեզ են հասել Լևոն Բ-ի երեք դիմապատկերները, որոնցից երկուսի հեղինակը մանրանկարիչ Թորոս Ռոսլինն է:

Ռոսլինյան այս երկու մանրանկարների վրա էլ Լևոն Բ թագավորի հագուստի վրա պատկերված են զինանշաններ:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում պահվող թիվ 8321 ձեռագիր «Ավետարանի» 25ա էջում ողջ հասակով պատկերված է Լևոն Բ-ն, երբ դեռևս թագաժառանգ էր:

Լևոն Բ-ն հագած է կապույտ գույնի պատմուճան, որի վրա կրում է կարմիր գույնի թիկնոց:

Կապույտ պատմուճանի վրա դեղին ոսկեթելով գործված են կլոր մեդալիոններ: Մեդալիոնների ներսում գործված է գլխով դեպի ձախ շրջված և վարգի դիրքով առյուծ: Կենդանու մեջքի միջին մասում գործված է կլոր գունդ՝ իշխանության խորհրդանիշը:

1262 թվականին, Լևոն Բ թագավորի և Կեռան թագուհու ամուսնության առթիվ Թորոս Ռոսլինն ընդօրինակել է մի նոր «Ավետարան», որի 288ա էջում պատկերված են թագավորն ու թագուհին՝ պաշտոնական հանդերձանքով:

Լևոն Բ թագավորը հագած է կապույտ գույնի պատմուճան և կրում է բաց ծիրանագույն թիկնոց: Պատմուճանի վրա կարմիր գույնով պատկերված են մեդալիոններ, որոնց ներսում նույն գույնով, գլխով դեպի ձախ դարձած առյուծ է պատկերված: Այն ամբողջովին կրկնում է Լևոն Բ-ի նախորդ նկարի առյուծապատկերը: Թիկնոցի վրա սպիտակ գույնով մեդալիոններ են պատկերված, որոնց ներսում գլխով դեպի աջ ու ձախ դարձած մարդու դեմքով արծիվներ են պատկերված: Մեդալիոնների

առաջացրած կորագիծ քառակուսու ներսում պատկերված են պոչի վրա հենված, թևերը մարմնից հորիզոնական դիրքով հեռացրած դիմահայաց արծիվներ: Թռչունը կտուցով շրջված է դեպի աջ:

Կեռան թագուհին հանդերձավորված է կապույտ պատմուճանով և կարմիր գույնի թիկնոցով:

Պատմուճանը դրվագազարդված է ոսկեգույն և կարմիր գույնի թելերով: Ոլորուն նախշազարդի ներսում պատկերված է պոչի վրա հենված, թևերը մարմնից ուղղահայաց հեռացրած, դիմահայաց, թագակիր, մարդու դեմքով արծիվ:

Լևոն Բ թագավորի հագուստի վրա պատկերված առյուծը, մարդու դեմքով արծիվները կրկնում են շուրջ 200 տարի առաջ Կարսի Գագիկ Աբասյան թագավորի, Գորանդուխտ թագուհու և Մարեմ արքայադստեր հագուստի վրա եղած պատկերները և ներկայացնում Հայոց արքայատների ժառանգորդության փաստը:

Այստեղ շատ կարևոր է նաև գույների խնդիրը. օգտագործված են կարմիր, կապույտ, ծիրանագույն, սպիտակ գույները, որոնք, համոզված ենք, Կիլիկիայի պետական դրոշի շերտագույներն են:

Հեթում Առաջին թագավորն իր հատած դրամների վրա փոխել է առյուծի դիրքը. այն գլխով շրջված է դեպի աջ և նայում է իր պոչին: Փոխվել է նաև խաչի դիրքը. այն նույնպես սկսվում է ձախից և թեքությամբ իջնում է դեպի աջ:

Կիլիկիայի հաջորդ թագավորները՝ Օշինը (1308-1320թթ.), Լևոն Չորրորդը (1320-1342թթ.), Կոստանդին Երրորդը (1344-1363թթ.), Կոստանդին Չորրորդը (1365-1373թթ.) օգտագործել են միատեսակ զինանշան: Նրանց դրամների վրա առյուծը, ինչպես և Հեթում Առաջինի օրոք, գլխով շրջված է դեպի աջ: Տարբերությունը միայն այն է, որ առյուծը դեմքով ոչ թե պոչի ուղղությամբ է նայում, այլ դեպի առաջ: Առյուծը պատկերված է բաց երախով: Բոլոր այս պատկերներում առյուծի թիկունքում եղած խաչը նույն տեղադրությունն ունի, ինչ որ Հեթում Առաջինի դրամների վրա: Այս բոլոր դրամների վրա խաչի պատկերը մեկ հորիզոնական գծով է պատկերված:

Փաստորեն, Կիլիկիայի հայոց թագավորության զինանշանի վրա, բացի Լևոն Առաջինի երկառյուծ երկրորդ զինանշանից, մյուս բոլոր թագավորները (նաև՝ Լևոն Առաջինը) պատկերել են գլխով աջ կամ ձախ թեքված միայնակ առյուծ՝ որոշ պատկերագրական տարբերություններով:

Կիլիկյան պետության Լևոն Առաջին թագավորի՝ գլխով դեպի

ձախ շրջված և դեմքով դիտողին նայող առյուծի պատկերով զինանշանն օգտագործվել է թե՛ Հայաստանի Առաջին Հանրապետության, թե՛ Հայաստանի Երկրորդ Հանրապետության զինանշանների վրա:



Հատված Լևոն Ե թագավորի տապանաքարից

Զույգ առյուծներ են քանդակված նաև 1399 թվականին մահացած և Փարիզի Սեն Դենի տաճարում թաղված Լևոն Ե թագավորի տապանաքարի վրա:

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Զաքարյանները հայոց պատմության թատերաբեմ բարձրացան 12-րդ դարի երկրորդ կեսին, և հայ ժողովրդի համար, որ արդեն մեկուկես դար կորցրել էր քաղաքական անկախությունը, միասնությունը, հավաքականությունը, սեփական ուժերին ապավինելու և հարազատ երկրի ու հայ ժողովրդի անկախությունը բարեհորոգելու առաքելական դերը կատարեցին:

Իշխանատան հիմնադիրը Զաքարեի որդի Սարգիսն էր: Այս Սարգիսը, որ հիշվում է Սարգիս Մեծ անունով, թերևս մեծ էր նախևառաջ որպես քաղաքական գործիչ, դիվանագետ: Իր ժամանակի քաջ ու արժանավոր հայազգի իշխաններից այս Սարգիսն էր, որ հասկացավ հայ-վրացական զինակցության ուժն ու անհրաժեշտությունը և իր որդիների ու եղբոր քաղաքական կողմնորոշումը դարձրեց անկախ Վրաստանի հզորացումը, այդ երկրում հայերի արտոնյալ վիճակի ապահովումը, հայազգի իշխանների զինական ուժերի համախմբումն ու հայկական առանձին բանակի ստեղծումը վրացական զորքի կազմում, որի հրամանատարն էլ դարձավ ինքը: Նա առաջինն էր, որ դարձավ նաև Հայ-վրացական բանակի ամիրսպասալարը (գլխավոր հրամանատար): Նրա որդիները՝ Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն, շարունակեցին հոր սկսած գործը և ի կատար ածեցին հայ ժողովրդի երազանքը. շուրջ երկու տասնամյակում թուրք-սելջուկներից ամբողջովին մաքրեցին Բագրատունյաց Անի-Շիրակի, Կարսի, Ձորագետի թագավորությունների, Սյունյաց իշխանության հողերը և այդ տարածքում ստեղծեցին իրենց իշխանապետությունը:

Զաքարյանների նախնիները փոքրիկ կալվածքներ ունեին

Հյուսիսային Հայաստանում՝ Տաշիր-Զորագետում: Հաղարծինի եկեղեցու արձանագրության մեջ Իվանե Ա-ն հայտնում է, որ իրենք սերում են Բագրատունիներից: Հայտնի է, որ նրանց մայրը Թիֆլիսի ամիրա, Մահկանաբերդի իշխանաց իշխան Քուրդ Արծրունու քույր Սահակդուխտն է: Այս էլ հաստատված է ժամանակի հիշատակություններով, արձանագրություններով, ինչպես նաև Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի՝ Անբերդի արաբատառ արձանագրության մեջ:

Հոր կողմից Բագրատունի, մոր կողմից Արծրունի Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն, ինչպես նաև նրանց հորեղբորորդի Զաքարե Գ-ն, իշխանապետության հողերը բաժանեցին երեք մասի: Անի-Շիրակի թագավորության հողերը, Լոռու մի մասը, Արագածոտնը բաժին ընկան Զաքարե Բ-ի տանը, որին ենթակա էին Վաչուտյանները, Պահլավունիները, Հոնենք, Արծրունիները, Մամիկոնյանները: Նրանց մայրաքաղաքն էր Անին: Լոռու մի մասը, Այրարատյան նահանգի մի քանի գավառներ, Գեղամա լճի ավազանը բաժին ընկան Իվանե Ա-ի տանը, որին ենթակա էին Դոփյանները, Պռոշյանները, Օրբելյանները: Նրանց մայրաքաղաքն էր Դվինը: Քուռ գետի աջափնյա տարածքը՝ Լոռուց մինչև Գանձակ, և Գեղամա լեռները դարձան Վահրամյանների սեփականությունը: Նրանց ենթակա էին Նորբերդի և Մածնաբերդի Կյուրիկյանները (Բագրատունիները): Իշխանատիրույթի մայրաքաղաքը Գագ ամրոցն էր:

Անսահմանափակ էր Զաքարյանների իշխանությունը: Եվ, իրավամբ, ժամանակակիցները նրանց անվանել են ինքնիշխան տերեր, թագավորներ:

Հայոց պատմության մեջ մշակույթի, տնտեսության, շինարարական արվեստի ոսկե դար կարելի է կոչել Զաքարյանների իշխանապետության այն շրջանը, որ նախորդեց 1236 թվականի մոնղոլական արշավանքներին: Կառուցվեցին հարյուրավոր հոյակերտ եկեղեցիներ, անառիկ բերդեր, պալատներ, գրվեցին ու նկարազարդվեցին հազարավոր բարձրարժեք ձեռագրեր, բացվեցին դպրոցներ ու բարձր տիպի դպրանոցներ, համալսարաններ:

Զաքարյան տան ներկայացուցիչները մոնղոլական գերիշխանության հաստատումից հետո էլ գերագահ դեր ունեին հայ-վրաց իշխանների վրա, զբաղեցնում էին պետության բարձր պաշտոններ (աթաբեկ-թագավորահայր, ամիրսպասալար-գլխավոր հրամանատար, մսախուրթուխուցես-արքունի մեծ վեզիր):

Հետաքրքիր զարգացում է ապրել Զաքարյանների զինանշա-

նային պատկերագրությունը: Այս տոհմի Վահրամյան ճյուղի զինանշանը թևաբաց, ճանկերով աղվես բռնած արծիվն էր, ինչպես նաև՝ զույգ առյուծները: Իսկ ահա Զաքարյանների մյուս տները՝ Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի տոհմերը, զինանշանների պատկերագրությամբ հաստատելով Բագրատունիների իրավահաջորդ լինելը, իրենց կառույցների վրա որպես զինանշան փորագրել են նաև առյուծներ:

Արծվի պատկերով զինանշանի վաղագույն օրինակը քանդակված է Սանահինի՝ Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի կողմից 1198 թվականին կառուցված տոհմական դամբարանի մուտքի բարավորին: Արծիվները քանդակված են խաչի երկու կողմերի հավերժության վարդյակների վրա կանգնած, կողքից, գլխով իրար դարձած: Թռչունների մարմնի մանրամասները ժամանակի ընթացքում որոշ չափով մաշվել են և երբեմն շփոթում են աղավնիների հետ:

1215 թվականին Իվանե Ա-ի միջոցներով և հովանավորությամբ կառուցված Գեղարդի գլխավոր եկեղեցու հարավային մուտքի բարավորի երկու կողմերում փորագրված են դեմ-դիմաց կանգնած արծիվներ (ինչպես Զաքարյանների տոհմական դամբարանում): Այստեղ արծիվները ոչ թե իրար, այլ դիտողին են նայում:

Զույգ արծիվների քանդակի մեկ այլ տարբերակ առկա է 13-րդ դարի 40-ական թվականներին Սանահինում կառուցված զանգակատան մուտքի բարավորին: Մուտքի սլաքաձև բարավորի երկու կողմերում, դեմ–դիմաց փորագրված են իրար նայող արծիվներ: Վերջիններս՝ հզոր ոտքերով, ուղղահայաց դիրքով կանգնած են պատվանդանների վրա: Թռչունների գլուխները կոտրված են: Նրանց կուրծքը և թևագլուխը մշակված են թեփուկաքանդակով: Թևերը, պոչը, ոտքերի վերնամասը մշակված են զուգահեռ փոսիկագծերով:

Արծվի կողապատկերով զինանշանների դիտարկված օրինակներին հակառակ՝ Զաքարյան տոհմի ներկայացուցիչները կիրառել են նաև արծվի այլ պատկերաձևեր:



Դրանցից մեկը գտնվում է Գեղարդի մեծ եկեղեցու թմբուկի արևելյան կամարաղեղի վերնամասում: Պատկերված է մագիլներով կենդանու ողնաշարից բռնած արծիվ: Թռչունը պատկերված է դիմահայաց, հենված է հզոր պոչի վրա: Կուրծքը վերնամասում վահանաձև է, լիքը, թևերը բացված դիրքով են՝ հողամասում հատուկ ձևավորմամբ, թևերը և պոչը իրականացված են խոր ակոսներով: Գլուխը

կլորավուն է, հզոր կտուցով և տիրական հայացքով: Կրծքի գրեթե կենտրոնից իջնող ոտքերի ճանկերով ամուր բռնել է գլխով դեպի աջ դարձած կատվազգիների ընտանիքին պատկանող կենդանու (հավանաբար՝ հովազի կամ վագրի), որը ցավից կծկել է ոտքերը:

Ազատագրված Անին դարձավ ոչ միայն Զաքարե Բ-ի տան, այլև ամբողջ իշխանապետության մայրաքաղաքը: Հավանաբար, հենց Զաքարե Բ-ի օրոք, 13-րդ դարի սկզբներին, քաղաքի պարսպի մեջ ագուցվել է նոր իշխանատոհմի՝ Զաքարյանների զինանշանը: Մեզ հասած լուսապատկերից կարելի է եզրակացնել, որ արծիվը հիմնականում կրկնել է Գեղարդի թմբուկի պատկերաքանդակը: Արծիվը թևաբաց է, լիքը կրծքով, ցավոք, գլուխը կոտրված է: Հզոր ոտքերով կանգնած է ինչ-որ կենդանու վրա, որի ինչ լինելը դժվար է պարզել: Գերված, բռնաղատված Անիի այս նշխարն էլ, հավանաբար, զոհ է գնացել թուրքերին:

Անիի Փրկիչ եկեղեցին կառուցվել է 1036 թվականին, Աբլղարիբ Պահլավունու պատվերով: 1342 թվականին Զաքարյան Վահրամ Դ աբաբեկի կողմից եկեղեցու գմբեթը նորոգվել է և, ամենայն հավանականությամբ, այդ ժամանակ էլ գմբեթի թմբուկի նիստերից մեկին, վերնամասում ագուցվել է Զաքարյանների զինանշանը՝ դիմահայաց արծիվը: Զինանշանը պատկերագրությամբ նման է Գեղարդի գլխավոր եկեղեցու թմբուկի քանդակին: 1957 թվականին մարդկային ստեղծագործության ոխերիմ թշնամի ու Անին բռնատիրող թուրքերի օգնությամբ եկեղեցու արևելյան կեսը պոկվել, խոնարհվել է: Կիսված եկեղեցին, ինչպես և մեր կիսված ազգը, ի հեճուկս թուրքերի, անգամ այդ վիճակում կանգուն է և կրում է Զաքարյանների արծվանշանը:

Զաքարյանների առյուծապատկերով վաղագույն զինանշանը փորագրվել է Մակարավանքի փոքր եկեղեցու արտաքին պատին: Եկեղեցին 1198 թվականին կառուցել է վանքի վանահայր Հովհաննես Ա-ն:

Մակարավանքի առյուծներով զինանշանը փորագրված է պատուհանի պսակի վերնամասում: Դեմ-դիմաց պատկերված են երկու առյուծներ: Նրանք հետևի ոտքերով

հենված են պսակի հորիզոնական հատվածներին, առջևի մեկական ոտքերը հենել են պսակի աղեղնաձև պարակալին, իսկ մյուս զույգ ոտքերով՝ «ձեռք սեղմել»: Առյուծները դեմքով դարձած են դիտողին: Աջակողմյան առյուծի պոչը գտնվում է ոտքերի արանքում, ձախակողմյանինը՝ սովորական դիրքով կախ է ընկած գետնին:

Գեղարդ

Կենդանիների դեմքերը, իշխանատենչ աչքերը լավ մշակված են: Այստեղ անվերապահորեն պատկերված են Զաքարյան երկու եղբայրները՝ Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն: Այդ թվականներին նրանք ձեռք-ձեռքի սկսեցին հայկական հողերի ազատագրության գործը:

Մեկ տասնամյակ անց, Իվանե Ա-ի իշխանության տարածքում օգտագործման դրվեց առյուծի և ցուլի պատկերագրությամբ նոր զինանշան: Մեզ հայտնի են երկու օրինակ. մեկը՝ Մակարավանքի գավթից, մյուսը՝ Գեղարդի գլխավոր եկեղեցուց: Երկու քանդակներն էլ իրենց ժամանակաշրջանով համընկնում են. Գեղարդի եկեղեցու կառուցումն ավարտվել է 1215 թվականին, Մակարավանքի գավիթը կառուցվել է 1210-1220-ական թվականներին:

Գեղարդում զինանշանը տեղակայված է գլխավոր եկեղեցու հարավային ճակատի պատուհանի վերնամասում: Առյուծը առջևի ոտքերով հենված է գլխով դեպի իրեն դարձած ցուլի մեջքին: Երկու կենդանիներն էլ դեմքով նայում են դիտողին: Թեև կենդանիների մարմնի մանրամասներն ընդգծված չեն, բայց բարձրաքանդակներն իրականացված են ճշմարտացի և բավականին ազդեցիկ տեսք ունեն:

Մակարավանքի գավթի արևմտյան մուտքի ձախակողմում առկա է նույն զինանշանի մեկ այլ տարբերակ: Առյուծը գետին է տապալել ցուլին և ճանկերը խրել վերջինիս մաշկի մեջ: Քանդակագործի ձեռագիրն այստեղ մի քիչ ավելի նուրբ է, թեև շատ հավանական է, որ երկու զինանշաններն էլ իրականացրել է նույն քանդակագործը: Այս

վերջին զինանշանը թեմատիկ առումով կրկնում է Սյունյաց տերերի՝ Ցաղաց քարի Սուրբ Կարապետ եկեղեցու պատին ագուցված զինանշանին:

Այս երկու զինանշաններում մեկ առյուծի հանդես գալն ակներևորեն հաստատում է, որ իշխանության այդ հատվածը պատկանում է Իվանե Ա-ի տանը:

Մակարավանք

Անվերապահորեն զինանշանային բնույթ ունի նաև Հաղարծինի գլխավոր եկեղեցու հարավային ճակատի առյուծի բարձրաքանդակը: Կենդանին պատկերված է կողքից, դեմքով շրջված է դեպի դիտողը, պոչը ոտքերի արանքում է: Թեև գլուխը հողմնահարված է, բայց տիրական արտահայտություն ունի: Ընդհանուր առմամբ՝ հիշեցնում է Մակարավանքի զույգ առյուծներից ձախակողմյանին: Գլխավոր եկեղեցին, ըստ մուտքի բարավորի արձանագրության, կառուցվել է 1281 թվականին: Զինանշանը պատկանում է Իվանե Ա-ի հաջորդներին:

ՎԱՀՐԱՄՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Վահրամյանները Զաքարյան ավատական տան ներկայացուցիչներից են, Զաքարե Ա-ի Վահրամ որդու հաջորդները:

Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի ազատագրական պատերազմներին ակտիվորեն մասնակցում էին հորեղբորորդիներ Զաքարե Գ-ն և Սարգիս Գ-ն: Թամար թագուհին շռայլորեն վարձատրեց Զաքարյաններին: Սարգիս Բ-ի ժառանգներից անկախ՝ Զաքարե Գ-ն Վաճառի իր փոքրիկ կալվածքներին ավելացրեց Գագի բերդը (ներկայումս՝ Նոյեմբերյանի տարածաշրջանում) և շրջակայքը, իսկ նրա եղբայր Սարգիս Գ-ն ստացավ Ջավախքը՝ Թմուկ բերդով, և 14-րդ դարում ընդունելով քաղկեդոնականություն՝ վրացիացավ ու մեծ դեր խաղաց վրացական մշակույթի զարգացման գործում:

Մինչև 1210-ական թվականները Զաքարե Գ Վահրամյանն իր արյունակիցների օգնությամբ վերագրավեց Քուռի աջափնյա հայկական պատմական հողերը՝ մինչև Սևանի լեռները ու մինչև Գանձակ, և ստեղծեց մի մեծ, ուժեղ իշխանատիրույթ, որը իր տարածքով երրորդն էր Զաքարյանների իշխանապետությունում:

Վահրամյաններն իրենց իշխանատիրույթի սահմաններն ընդարձակելու, երկրամասը խաղաղ պահելու համար կռիվներ են մղել հարևան ելտկուզյանների, Ջալալ էդ-Դինի դեմ, վերագրավել են վերջինիս նվաճած Շամքորը:

Վահրամյանների իշխանատիրույթի մայրաքաղաքը Գագ ամրոցն էր, իսկ հոգևոր կենտրոնը՝ Նոր Վարագավանքը (ներկայումս՝ Տավուշի տարածաշրջանում):

Այս հզորագույն իշխանատան ներկայացուցիչները իրենց լայնածավալ իշխանատիրույթում ևս հովանավորում էին մշակույթի զարգացումը: Պատերազմական կարճատև դադարների տարիներին երկրամասում ծավալվում էր աննախադեպ շինարարական եռուզեռ, գրվում ու ընդօրինակվում էին արժեքավոր ձեռագրեր:

Զաքարյանները տարբեր առիթներով շեշտել են, որ իրենք Բագրատունիների սերնդից են և որպես իրավահաջորդ՝ ժառանգեցին Բագրատունիների զինանշանը: Մեզ է հասել Վահրամյանների զինանշանի ընդամենը մեկ օրինակ: Այն գտնվում է Խորանաշատի (ներկայումս՝ Տավուշի տարածաշրջանում) Սուրբ Աստվածածին եկեղեցու արևելյան պատին:

Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցումն սկսվել է 1206-1210-ական թվականներին և ավարտվել մինչև 1221 թվականը: Եկեղեցին հիմնադրել ու կառուցումը հովանավորել է միջնադարի մեծ ուսուցչապետերից մեկը՝ Վանական Վարդապետը: Հավանաբար, նրա պահանջով եկեղեցու արևելյան ճակատին, ամենաաչքի ընկնող տեղում, զույգ պատուհաններից վերև, վեհասքանչ խաչի աղեղնաձև հիմքի տակ տեղադրվել է իշխանատիրույթի տերերի զինանշանը՝ ճանկերով ինչ-որ կենդանու ողնաշարից բռնած արծիվը: Արծիվը քանդակված է թևերը բաց, թռիչքի պահին, հարթ, առանց մանրամասների ընդգծման և գրեթե կրկնում է Անիի Մայր տաճարի արևմտյան ճակատի Բագրատունիների զինանշանի զույգ արծիվներին: Արծվի ճանկերի մեջ՝ գլխով դեպի ձախ դարձած կենդանին, գիշատիչ գազան է, հավանաբար, աղվես: Նման եզրակացության հիմք է տալիս կենդանու սուր, բաց երախը, երկար ականջները: Հակառակ արծվի՝ այս կենդանու մարմնի մանրամասներն ավելի որոշակի ընդգծված են ու խոսուն:

Վահրամյանները, որպես տոհմական զինանշան ընդունելով ազատ, անընկճելի արծվին, միաժամանակ իրենց թշնամիներին, որ սելջուկ-թուրքերն էին, պատկերել են թալանի, արյան, խորամանկության մարմանցում կենդանու՝ աղվեսի տեսքով, որին իրենք ողնաշարախեղ են դարձրել, ինչպես

վարվեցին թուրք ելտկուզյանների հետ, երբ ազատագրում էին իրենց լայնածավալ իշխանատիրույթը:

Խորանաշատում առկա է ևս մեկ զինանշանային պատկեր՝ 1216-1250-ական թվականների ընթացքում կառուցված գավթի արևմտյան պատին, մուտքից վերև: Այստեղ տեսնում ենք երկու նստած առյուծներ, որոնց կենտրոնում պատկերված մարդը բռնել է առյուծների պարանոցներին ագուցված շղթան: Կենդանիները արձանային աշխատանքներ են, իսկ մարդը՝ հարթաքանդակ: Ինչպես մարդը, այնպես էլ առյուծները դեմքով նայում են դիտողին: Առյուծներ՝ այն էլ շղթայակապ, առկա են Գեղարդում, իրար դեմ առ դեմ կանգնած առյուծների պատկերները կան Մակարավանքում, Գանձասարում: Առյուծների միջև կանգնած մարդը շքեղ հագուստով է, իշխանավորի տեսքով: Այստեղ կոնկրետ կերպարներ են քանդակված, և քանդակն անժխտելիորեն զինանշանային արժեք ունի: Առյուծները կարող են լինել հայր ու որդի Զաքարե Գ-ն և Աղբուղա Բ-ն, իսկ պարեգոտով մարդը՝ իշխանատոհմի հիմանդիր Վահրամը:

ՀՀ պատմության բանգարան

Հովհաննավանք

ՎԱՉՈՒՏՅԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

13-րդ դարի սկզբներին Զաքարե և Իվանե Զաքարյան եղբայրների ազատագրական արշավանքների ընթացքում առաջ քաշած իշխանական տոհմերից էր Վաչուտյանների նորաստեղծ իշխանական ընտանիքը, որի անդամներին վիճակված էր շուրջ մեկուկես հարյուրամյակ իշխել պատմական Նիգ-Արագածոտնի (ներկայումս՝ Ապարանի և Աշտարակի տարածաշրջաններ) հողերին:

Վաչե Ա-ն և Մամախաթունը, ինչպես նաև նրանց հաջորդները՝ Քուրդ Ա-ն և Խորիշահը, Վաչե Բ-ն, Հասանը, Դավիթը, Քուրդ Բ-ն և Խուանդ Խաթունը, Թեոդոսը Նիգ-Արագածոտնի իրենց իշխանատիրույթում իշխեցին մինչև 1350-ական թվականները: Նրանց կողմից կառուցվեցին Անբերդի նոր դղյակը, բերդաքաղաքի նոր բուրգավոր պարիսպները, Կարբիի բերդը, Վարդենիսի (Ապարան) դղյակը և բերդը, Աստվածընկալի բերդը, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Տեղերի, Ուշիի, Աստվածընկալի, Եղիպատրուշի վանական համալիրները, Կարբիի հաղթակամար զանգակատունը, Արայիի, Ճանճիկի իջևանատները, Աշտարակի կամուրջը (այժմ այդ կամրջի ձախակողմյան խելը պահպանվում է 1664 թվականին կառուցված կամրջից մի քանի քայլ հեռվում): Վաչե Ա-ն կառուցել է Սանահինի մեծ գավիթը, Մակարավանքի գավիթը: Նա և Մամախաթունը նպաստավորել են նաև Հոռոմոսի գրատան կառուցումը: Վաչե Ա-ն նորոգել է Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցին: Ամուսիններով բազմաթիվ նվերներ են ընծայել Հաղպատի և Սանահինի վանական համալիրներին: Քուրդ Ա-ն պատրաստել է տվել Սևանի եկեղեցու փայտե դուռը:

Վաչուտյան իշխանատոհմի զինանշանների հնագույն օրինակները պահպանվել են Հովհաննավանքում: Դրանցից մեկն ագուցված է եղել 5-րդ դարի բազիլիկ եկեղեցու արևելյան պատի արտաքին ձախ կողմում, մեկն էլ ընկած է եղել Կաթողիկե եկեղեցու ավերակների մեջ և տեղափոխվելով Հայաստանի պատմության թանգարան՝ ցուցադրվում է թանգարանի առաջին հարկում՝ միջնադարյան քարարվեստի բաժնում:

5-րդ դարի բազիլիկ եկեղեցու պատին ագուցված զինանշանին Վաչուտյանները որպես խորհրդանիշ ընտրել են արծիվների ընտանիքին պատկանող երկու միացեղ թռչուն: Հին ու նոր իշխանական տներից Արծրունիների, Բագրատունիների, Մամիկոնյանների, Օրբելյանների, Պռոշյանների, Ազիզբեկյանների զինանշաններին հակառակ, որոնցում նույնպես հիմնական խորհրդանիշն արծիվներն են, որոնք իրենց ճանկերի մեջ պահում են որևէ կենդանու (եղնիկ, այծ, գառ, թռչուն), Վաչուտյանների զինանշանակիր քարի վրա քանդակված են գլխով դեպի աջ դարձած արու և էգ արծիվներ, որոնցից արուն կանգնած է էգի մեջքին և կտցով շոյում է վերջինիս վիզը: Այստեղ արտահայտված է սիրո, հավատարմության խորհուրդը և գործնականում գովերգում է արուի և էգի (տղամարդու և կնոջ, այս դեպքում՝ Վաչե Ա-ի և Մամախաթունի) միությունը: Որ Վաչուտյաններն այդ են ցանկացել ընդգծել, հավաստում են արծիվների գլխամասից դեպի աջ պատկերված հավերժության խորհրդանիշ մեծ և փոքր կենաց ծառերը: Ինչպես ընդհանուր քանդակը, այնպես էլ այն մատուցելու եղանակը, շատ նուրբ ու թափանցիկ ձոն են սիրո, միության, բազմացման և հավերժության: Ներկայումս այս պատկերաքարը տեղադրված է Կաթողիկե եկեղեցու արևմտյան պատի քիվի տակ:

Անբերդ

Երբ արդեն կառուցվում էր Կաթողիկե եկեղեցին, հարկ է եղել պատրաստել նույն զինանշանի ևս մեկ օրինակ և տեղադրել եկեղեցու, հավանաբար, արևմտյան արտաքին պատին: Այս զինանշանային քանդակը կրկնում է առաջինին ինչպես թռչունների տեղադրությամբ, այնպես էլ նրանց գլխի՝ դեպի աջ կողմ ուղղվածությամբ: Պակասում

են միայն կենաց ծառերը, իսկ թռչունների մարմինները ձևավորված են թեփուկաքանդակներով:

Ծննդաբանական ի՞նչ սկզբնաղբյուր ունի Վաչուտյանների որդեգրած էգ և արու արծիվների զուգադրմամբ զինանշանը:

Մակարավանք

Նոր Վարագավանք

Իրար մեջքի կանգնած և դեպի աջ ուղղված գլուխներով արծիվներով հնագույն զինանշանը պատկերված է Աղթամարի Սուրբ Խաչ տաճարի պատկերաշարում՝ Համազասպ Արծրունու ձախ կողմում: Տաճարը կառուցվել ու քանդակազարդվել է 915-921 թվականներին, և, փաստորեն, այնտեղ պատկերված զույգ արծիվների քանդակը շուրջ երեք դարով նախորդում է Վաչուտյանների զինանշանին: Արծրունիների և Վաչուտյանների զինանշանների տարբերությունը միայն այն է, որ Աղթամարում վերևում կանգնած արու արծիվը քանդակված է թևերը թափահարելու դիրքով:

Գեղարդ

Գլաձոր

Ժամանակագրորեն՝ Հովհաննավանքի պատկերաքանդակներից մի քանի տարով ավելի վաղ, Վաչուտյաններն իրենց զինանշանը քանդակել են Մակարավանքի եկեղեցու բեմառէջքի ութաթև աստղի

մեջ: Մակարավանքի եկեղեցու կառուցումն ավարտվել է 1205 թվականին: Եկեղեցին կառուցել է Բազազ իշխանի որդի Վարդանը:

Եթե Բազազ իշխանի և նրա որդի Վարդանի մասին այլուստ ոչինչ հայտնի չէ, ապա կարևոր է, որ այդ երկրամասի տերը Սադուն իշխանն է:

Այս Սադունը Կայենի և Մահկանաբերդի մեծ իշխան, աթաբեկ, ամիրսպասալար Սադուն Բ-ի պապն է, Ամիր Քուրդ Արծրունու որդին: Փաստորեն, դարձյալ գործ ունենք Արծրունիների հետ և կարող ենք հավաստել, որ որդեգրելով զույգ արծիվների պատկերով զինանշանը, Վաչե Ա-ն, ամենայն հավանականությամբ, շեշտել է իր հարազատությունը Կայենի տեր Արծրունիների կամ վերջիններիս արյունակից կամ ենթակա Բազազ իշխանի տոհմերի հետ: Այդ է թելադրում նշանների, հատկապես զինանշանի որդեգրումը, որը չի կարող կամայական լինել, այլ պատճառաբանված ժառանգականության արդյունք է: Հավանաբար, նաև այս բարեկամությամբ պետք է բացատրել Վաչուտյանների անվանացանկ մտած Քուրդ անձնանունը:

Վաչե Ա-ի կենդանության օրոք նրա զինանշանը ևս մեկ անգամ պատկերվել է Հյուսիսային Հայաստանում՝ Նոր Բերդի (Տավուշ) Վարագավան գյուղից 2 կմ արևմուտք կառուցված Նոր Վարագավանք հոգևոր համալիրի Սուրբ Աստվածածին եկեղեցու պատին: Եկեղեցին 1224-37-ական թվականներին կառուցել է Նոր Բերդի Դավիթ իշխանի որդի Վասակ Բ-ն: Եկեղեցու արևմտյան մուտքի աջ կողմում, բարձրուստ, վեցանկյուն եզրագիծ ունեցող սալիկի վրա փորագրված է Վաչե Ա-ի արծվանշանը, որը ևս հար և նման է Հովհաննավանքի քանդակապատկերներին:

Վաչե Ա-ի որդեգրած զինանշանը ևս երկու անգամ պատկերվել է ժամանակակից կառույցների վրա: Դրանցից ժամանակագրորեն առաջինը փորագրվել է 1225-30-ական թվականներին կառուցված Գեղարդի համալիրի գավթի մուտքի վերնամասում, երկրորդը՝ 1273-79-ական թվականներին՝ Գլաձորի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հարավային ճակատին: Սակայն այս երկու պատկերաքանդակներն առանձնանում են նրանով, որ արծիվները, հակառակ Հովհաննավանքի, պատկերված են գլխով դեպի ձախ դարձած:

Եթե Մակարավանքում և Նոր Վարագավանքում Վաչե Ա-ի զինանշանի առկայությունը կապվում է նրա այդ տարածքից սերված լինելու կամ այդ տարածքներում հարազատներ ունենալու հանգամանքի հետ, ապա Գեղարդում և Գլաձորում նրա զինանշանի փո-

բագրվելն այդ կառույցներին՝ Վաչե Ա-ի կամ նրա ժառանգների կողմից նյութական աջակցություն ցույց տալու արդյունք է:

Վաչե Ա-ի օրոք օգտագործված զինանշանը նրա հաջորդների ժամանակ ևս եղել է պաշտոնապես ճանաչված (Գլաձորի Սուրբ Ստեփանոս եկեղեցու քանդակն այդ կարծիքի վկայությունն է), սակայն հավանական է նաև, որ Վաչուտյան իշխանատոհմի ժառանգները շրջանառության մեջ ունեցել են զինանշանների այլ տարբերակներ ևս:

1250-ական թվականների սկզբին մահացած իրենց մանկահասակ դստեր՝ Մամախաթունի հիշատակին Քուրդ Ա-ն և Խորիշահը 1255 թվականին Սաղմոսավանքի համալիրում գրատուն են կառուցել:

Շինության կտուրի տակ, խաչվող կամարներից մեկի վրա փորագրված են երկու բարձրաքանդակներ: Դրանցից մեկը մանկահասակ աղջնակ է, իսկ նրա կողքին՝ դիմահայաց պատկերով արծիվ, որը ճանկերով հենված է զուգահեռ ալիքներից կազմված կիսագնդի վրա: Այս արծվապատկերը հարդարանքի մաս չէ և քանդակված է որպես զինանշան: Հավանաբար, Քուրդ Ա-ի օրոք զինանշանի համար օգտագործվել է արծվի դիմահայաց պատկերը: Պետք է ընդգծել նաև, որ այս զինանշանի վրա ևս արծիվը ճանկող չէ և բռնություն չի խորհրդանշում:

Քուրդ Բ Վաչուտյանը 14-րդ դարի 30-ական թվականներին Կարբի գյուղում կառուցել է հաղթակամար-զանգակատուն, որի արևմտյան պատին 1338 թվակիր հիշատակագրական արձանագրությունից մի փոքր վեր, աջ կողմում կա մի բարձրաքանդակ, որը հաստատապես զինանշանի իմաստ ունի: Պատկերված է թևատարած, դիմահայաց արծիվ, որն ուղղահայաց դիրքով, հզոր ճանկերով հենված է հորիզոնական դիրքով թևերը մարմնին պինդ սեղմած և կողքի պառկած ինչ-որ թռչնի վրա: Այս զինանշանով Վաչուտյաններն առաջին անգամ ցուցանում են ուժի, իշխանության խորհրդանիշը:

ԱԶԻԶԲԵԿՅԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Միջնադարյան այս իշխանական ընտանիքի պատմությունն սկսվել է 13-րդ դարի վերջերին և խոտորումներով շարունակվել է մինչև 17-րդ դարի կեսերը:

Ազիզբեկյանների տոհմի գործունեությունը ծավալվել է Վաչուտյան իշխանական տոհմի տարածքներում, Արայի լեռան արևելահայաց լանջերին և ընդգրկել է շատ փոքր տարածք՝ ներկայիս Եղվարդ ավանից մինչև Նոր Գելի գյուղը:



Իշխանատան հիմնադիրը՝ Ավագի և Թամարի որդի Ազիզբեկը, ամենայն հավանականությամբ, այդ հողերին տեր է դարձել 1290-ական թվականներին, երբ մոնղոլ-թաթարների ասպատակությունների հետևանքով, ինչպես ամբողջ Հա-

յաստանը, այնպես էլ Վաչուտյանների իշխանատիրույթը հասել էր ծայրագույն քայքայման: Այդ օրերին էլ Ազիզբեկը, որ կամ Վաչուտյանների ազգականներից էր, կամ ծառայականներից (ենթակա իշխաններից կամ զորավարներից), ստացել կամ գնել է Եղվարդն իր շրջակայքով:



Ազիզբեկյանների շինարարական միակ գործը Եղվարդի Սուրբ Հակոբ եկեղեցին է: Այն եռահարկ (երկհարկ եկեղեցիով և սյունաշար զանգակատնով) կառույց է, ունի վերասլաց տեսք: Եկեղեցու մուտքի բարավորի վրա փորագրված արձանագրության համաձայն՝ այն կառուցվել է 1301 թվականին:

Եղվարդի Սուրբ Հակոբ եկեղեցու արտաքին պատերի վրա պատվիրատուի պահանջով փորագրվել են այդ տոհմի զինանշանները: Երկրորդ հարկի դռան վերնամասում քանդակված են թռիչքի, կռվի պատրաստ առյուծ, իսկ ձախակողմում՝ առջևի ոտքերով ծնկի եկած, գլուխը խոնարհած և հակառակորդի վրա հարձակվելու պատրաստ ցուլ: Առյուծ և ցուլ են պատկերված նաև Սյունիքի իշխանների (Ցաղաց քար), Զաքարյանների (Գեղարդ, Մակարավանք) զինանշանների որոշ տարբերակներում:

Եկեղեցու հարավային ճակատին փորագրված է դեմքով դեպի դիտողը դարձած, թևերը բաց, պոչի վրա հենված և ճանկերում հորթ բռնած արծիվ: Աշխատանքը կատարյալ քանդակագործական ստեղծագործություն է: Արծվի թևերը մշակված են ելունդավոր խորացումներով, դուրս ցցված կրծքին վարդյակ է փորագրված: Ցավոք, արծվի գլուխը կոտրված է, և դիտողը չի տեսնում թռչունի հայացքը, որն ավելի ամբողջականություն կհաղորդեր քանդակին:

Արևելյան պատին, պատուհանից վեր փորագրված է զինանշանային ևս մեկ տարբերակ. բծավոր վագրը գետին է տապալել եղնիկին, որի անշնչացած գլուխը կախված է կողքի:

ԴՍԵՂԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Ծնվող յուրաքանչյուր հայ երեխա մայրական առաջին գորովագութ խոսքերից հետո լսում է հայ զորավարների, հայոց պատմության վերելքների ու վայրէջքների մասին: Եվ բոլոր պատմությունների մեջ ամենամեծ ակնածանքով տրվում են Հայոց աշխարհի պաշտպանության վահան դարձած Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչների անունները: Թե այս քնիկ հայկական ազնվական տոհմը ինչպիսի հերոսներ է ծնել, բավական է հիշել Վասակի, Մուշեղի, Մանվելի, Վարդանի, Վահանի, Վարդի, Դավթի, Գրիգորի անունները:

12-րդ դարի վերջերին, Միջին Արևելքում, Բյուզանդիայում, Վրաստանում ցրված Մամիկոնյան նախարարական տոհմի ճյուղերից մեկը հաստատվել է պատմական Գուգարքում, ներկայիս Դսեղ գյուղում: Այս նոր իշխանատան հիմնադիրը թեև Սարգիս Մամիկոնյանն էր, բայց նրա պապի՝ Համազասպի անունով տոհմը երբեմն Մամիկոնյանին զուգահեռ կոչվում է Համազասպյան:

Իշխանատիրույթը փոքրերից է: Այն միավորում էր ընդամենը Դսեղ, Մղարթ, Կարմիր քար, Կկվաշեն, Ծաղկուտ, Իգատակ բնակավայրերն իրենց շրջակա հողերով:

Իշխանատան հիմնադիր Սարգիս Մամիկոնյանն ակտիվորեն մասնակցել է Հայաստանի ազատագրության համար Զաքարյան եղբայրների մղած կռիվներին և 1201 թվականին, հավանաբար, Բջնին գրավելու համար մղված մարտերում զոհվել է ու մեծ շուքով թաղվել Զաքարյան տոհմի ընտանեկան հանգստարանում՝ Սանահինի վանքի գավթում: Նրա գերեզմանին մի հոյաշուք խաչքար է կանգնեցվել:



Այս իշխանական ընտանիքը խնամիական կապերով կապված էր միջնադարյան Հայաստանի անվանի իշխանական տների՝ Վաչուտյանների, Օրբելյանների, Զաքարյանների, Ռուքանանց, Դոփյանների հետ: Ընտանիքի որոշ անդամներ եղել են Զաքարյանների զորավարները (Սարգիս Ա, Համազասպ Գ., Մամիկոն Գ.), մի քանիսը նվիրվել են հոգևոր ծառայության, եղել են Հաղպատի (Համազասպ եպիսկոպոս), Հովհաննավանքի (Համազասպ և Ներսես եպիսկոպոսներ) առաջնորդներ: Զաքարյաններին մատուցած ծառայությունների համար հողային կալվածքներ են ստացել Ուրծ գավառում, Խաչենում:

Մամիկոնյան-Համազասպյան իշխանատունն իր իշխանանիստ-մայրաքաղաք է դարձրել Դսեղ գյուղը, իսկ հոգևոր կենտրոնը՝ Դսեղից 2 կմ հյուսիս-արևելք, Մարց գետակին հարող ձորալանջին կառուցած Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր վանքը:

Մամիկոնյան-Համազասպյան տան ներկայացուցիչների շինարարական գործունեության արգասիք են Դսեղ գյուղի Լուսավորիչ եկեղեցին, Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր վանական համալիրը, տասնյակ բարձրակարգ խաչքարեր, Դեբեդ գետի վրա 1247 թվականին կառուցված կամուրջը: Առավել ընդգրկուն է այս իշխանատան ներկայացուցիչների մշակութանպաստ գործունեությունը: Տասնյակների է հասնում այն ձեռագրերի թիվը, որ պատվիրել են Դսեղի Մամիկոնյանները: Դրանցից Հովհաննավանքի առաջնորդ Համազասպ եպիսկոպոս Մամիկոնյանի պատվիրած ձեռագրերից միայն վեցն են հասել մեր օրերը և այժմ գտնվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում:



14-րդ դարի կեսերին Մամիկոնյան-Համազասպյան իշխանատունը հեռացավ պատմության թատերաբեմից, սակայն նրանց հաջորդները շարունակեցին ապրել Դսեղում:

Մամիկոնյան նախարարական տոհմի զինանշանի մասին հավաստի տեղեկություններ չկան: Բայց ահա Դսեղի Մամիկոնյան-Համազասպյան իշխանատան զինանշանը պահպանվել է:

Դսեղ գյուղի Լուսավորիչ եկեղեցին ավելի վաղ շրջանի կառույց էր, բայց գյուղին տեր դառնալուց հետո՝ Սարգիս Մամիկոնյանը կամ նրա անմիջական հաջորդ Սմբատ Ա-ն, 1200 թվականներին բազիլիկ, միանավ եկեղեցին վերակառուցել են: Եվ վերակառուցման ընթացքում էլ հարավային ավանդատան արևելյան ճակատին, պատուհանի պսակից վերև տեղադրել են իրենց զինանշանը: Ուղղանկյուն քարի վրա քանդակված է դիմադարձ երկգլխանի արծիվ, որը ճանկերով պահում է գառան մարմինը: Հարթաքանդակը թեև բավականին հողմնահարված-մաշված է, մանրամասները չքացել են, բայց արծվի պատկերը լավ երևում է:

Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր վանքային համալիրի գավթի արևելյան պատի հնգանիստ ծավալի կենտրոնական ճակատին, պատուհանից վերև մնում է նույն զինանշանի անխաթար օրինակը: Գավթի կառուցումն ավարտվել է 1247 թվականին: Այդ նույն ժամանակ էլ քանդակվել է զինանշանը. նույն երկգլխանի արծիվն է: Թռչնի գլուխները պատկերված են իրար նկատմամբ հակադիր դիրքով, գլխի մանրամասները լավ տեսանելի են, վիզը ձևավորված է եղևնանախշով: Թևերը վերնամասում պարույրաձև գալարներով շրջան են կազմում և իջնում են ներքև՝ մինչև ճանկերը, որոնք խրված են գառան ողնաշարի մեջ և պինդ պահում են կենդանուն հզոր պոչի վրա: Գառը, ինչպես և Լուսավորիչ եկեղեցու պատկերում, ուղղորդված է գլխով դեպի ձախ ու դեմքով նայում է դիտողին: Աշխատանքը թեև իրականացված է

առանց ավելորդ պաճուճանքների, սակայն քանդակագործական կատարյալ գլուխգործոց է:

Դիտարկելով Դսեղի Մամիկոնյանների զինանշանը՝ համոզված կարելի է պնդել, որ այն անպատճառ կապ ունի Մամիկոնյան տոհմի նախորդ շրջանի պատկերացումների, տոհմում ավելի վաղ գործածված զինանշանների հետ: Հավանաբար, իրենց զինանշանով Մամիկոնյան-Համազասպյան տան ներկայացուցիչները հաստատում են, որ իրենք աչալրջորեն հսկում են Մայր Հայաստանի սահմանները և նրա հողին աչք ունեցողներին կճզմեն գառան պես:

ՀՈՆԵՆՑ ՏՈՀՄԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Զաքարյանների ինքնօրեն իշխանապետությունում և նոր իշխանությունների կողքին բարձրացան նաև ազնվական ծագում չունեցող, բայց հարստության տեր մեծատուներ, որոնք իրենց հարստության շնորհիվ հասան բարձր դիրքի, պաշտոնի, դարձան նոր տիրակալների՝ Զաքարյանների տնտեսական ու քաղաքական հենարանը:

Տիգրան Հոնենցը Զաքարյան շրջանի մեծահարուստներից մեկն է: Ապրել և գործել է իշխանապետության մայրաքաղաք Անիում, Զաքարե Բ-ի ու նրա որդի Շահնշահ Ա-ի օրոք: Հավանական է, որ Զաքարյանների կողմից 1199 թվականին Անին գրավելուց անմիջապես հետո՝ Տիգրան Հոնենցը նշանակվել է մայրաքաղաքի հարկային վերակացու: Այդ խելամիտ ու գործունյա անձնավորությունը կարճ ժամանակում հարկերի կապալառության, վաշխառության, առևտրի ճանապարհով կուտակել է մեծ հարստություն, գնել Անի քաղաքի մի քանի թաղամասեր, գյուղեր, հյուրատներ, առևտրական կրպակներ, ջրաղացներ, ձիթհաններ, այգիներ, ջրագծեր: Նա կալվածքներ ուներ ոչ միայն

Անիում ու շրջակայքում, այլև Մրենում, Կարսում, Երևանում, Կոշում: Նա Անիի ամենախոշոր մեծատուն էր, ամենահայտնի անձը, քաղաքում նրա անվամբ փողոց կար: Տիգրան Հոնենցի դերը երկրի տնտեսական կյանքում շատ մեծ էր:

Իր անբավ հարստությունը Տիգրան Հոնենցը ծառայեցրել է Անիի պաշտպանական, հոգևոր շինությունների, ջրագծերի կառուցման, մշակութային-լուսավորչական գործին:

Տիգրան Հոնենցի անունն առաջին անգամ հիշատակվում է 1213 թվականին: Այդ տարի մեծահարուստը նորոգել է Անիի Մայր տաճարը, կառուցել աստիճաններ, նվերներ ընծայել, այդ թվում՝ երկու ձեռագիր տոնական: Իսկ մինչ այդ, հավանաբար, 1200-ական թվականների կեսերին, Տիգրան Հոնենցի պատվերով Ախուրյանի կիրճի պռնկին գնված տարածքում կառուցվել է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը Անիի Զաքարյան շրջանի ճարտարապետական-կառուցողական գարդերից մեկն է: Հոյաշեն այս կառույցի շինարարությունն ավարտվել է 1215 թվականին: Այստեղ կառուցվել են նաև վանականների կացարաններ, իշխանական պալատ (ամենայն հավանականությամբ, հենց իրենց՝ Հոնենցների համար), բաղնիք, ջրագիծ: Այդ շինությունները շրջապատվել են հզոր պարիսպներով:

Տիգրան Հոնենցի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին արտաքինից ծածկված է հարթաքանդակ գոտիով, իսկ ներսից՝ որմնանկարներով: Այն կառուցել է Հոնենց տոհմի ճարտարապետ Եղբայրիկը: Պատվիրատուն նորակառույց եկեղեցուն նվիրել է 8 գյուղ, 6 այգի, հյուրանոցներ, Հոտեցոնց փողոցի տները, կրպակներ, երկուական բաղնիք, պանդոկ, երկակն ձիթհանք, 3 ջրաղացների հատվածներ, մի քանի ախոռ ու մարագ, բանջարանոցներ, տարբեր հողակտորներ: Իր չափերով Տիգրան Հոնենցի նվիրատվությունը կարող էր համեմատվել միայն Տաթևի վանքի օծման առթիվ, 906 թվականին Սմբատ Ա Բագրատունի թագավորի և Սյունյաց իշխանների ընծայած նվերներին:

Տիգրան Հոնենցի միջոցներով կառուցվել են նաև Բեխենց վանքը և Կուսանաց անապատի եկեղեցին: 1222 թվականին Տիգրան Հոնենցի միջոցներով ճարտարապետ Եղբայրիկը կառուցել է քաղաքային պարսպի բուրգերից մեկը, որ պատմական գրականության մեջ ստացել է Եղբայրիկի բուրգ անունը: Պարսպի մեջ ագուցված խաչքարի ստորին մասում արձանագրված է. «Ես՝ Եղբայրիկս, ծառայ տեառն իմոյ Տիգրանայ, նորին ողորմութեամբն շինեցի զարձանս»:

Տիգրան Հոնենցի կառուցողական գարդերից մեկն էլ Ծակոցաձորի Այրային քաղամասի Հոնենց տոհմի պանթեոն-դամբարանն է, որի պատերը ծածկված են եղել տարբեր բովանդակությամբ որմնանկարներով: Դամբարանը պեղվել է 1910-ական թվականների սկզբին: Հայաստանի պատմության թանգարանի «Անի քաղաքը» ցուցասրահում, պատերից մեկի վրա ցուցադրվում է նրբահյուս մետաքսից կարված փոքրիկ աղջնակի հագուստ: Այդ հագուստները գտնվել են հենց Տիգրան Հոնենցի դամբարանում: Այդ հագուստները եղել են 4-5 տարեկան մի աղջնակի հագին: Աղջնակի մարմինը զմռսված է եղել և լավ պահպանվել է՝ հագուստով հանդերձ: Ցավոք, դաժանաբար են վարվել աղջնակի մարմնի հետ. պարսկահայ բժիշկ Թաշչյանը երեխայի գլուխը կտրել և Պարսկաստան է տարել «որպես սեղանի զարդ», իսկ բժիշկ Կ. Բասմանջյանը Փարիզ է տարել մարմինը:

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու թմբուկի նիստերից մեկի վրա ագուցված է դիմահայաց արծվի հարթաքանդակ, որտեղ թռչունը հզոր պոչի վրա մագիլներով պահում է գառան մարմինը: Այս պատկերը, սակայն, Զաքարյան տան զինանշանն է, և Տիգրան Հոնենցը այն իր կառուցած հոգևոր շինության վրա փորագրել է՝ հավաստելու համար իր անվերապահ ենթակայությունը Զաքարյան տանը:

Տիգրան Հոնենցը ևս ունեցել է զինանշան: Տիգրան Հոնենցի զինանշանին պատկերված են եղել արու և էգ առյուծներ: Այդ պարզվում է Հոնենց տոհմի դամբարանից հայտնաբերված ու Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող դրոշի վրա եղած պատկերից: Ցավոք, պատմական գրականության մեջ դրոշը ներկայացվել է որպես շղարշ:

Դրոշը սև գույնի կտորից է: Սևի վրա ոսկեզօծ, նուրբ հյուսվածքով պատկերված են դեմ-դիմաց կանգնած զույգ առյուծներ: Ձախ կողմում ավելի հզոր արուն է՝ ամբողջ մարմնով ձգված, կարծես թռիչքի պատրաստ, գլուխը տիրաբար վեր պարզած, պոչը տնկած: Նրա թիկունքին երևում է կենաց ծառը՝ իշխանատիրոջ, տոհմի հաջորդայնությունն ապահովողի նշանը, իսկ ներքևում պարզորոշ ընդգծված է հավերժության նշան՝ արևի կիսապատկերը: Աջ կողմում գլուխն իր տիրոջ մարմնին փարած հեզ ու խոնարհ կանգնած է էգ առյուծը:

Առյուծների մարմինների եզրագծերը, ինչպես նաև արուի բաշը գործած են ոսկե թելերով, իսկ մարմինները՝ մետաքսաթելով: Փաստորեն, ինչպես և Վաչուտյանների զինանշանին, որտեղ պատկերված են արու և էգ արծիվներ, Տիգրան Հոնենցի դրոշին պատկերված են արու և էգ

առյուծներ, որոնք խորհրդանշում են սիրո, ընտանիքի, հավերժության ուխտը:

Հայ իշխանական տների դրոշների մասին միայն հիշատակություններ կան: Պատմիչ Մխիթար Այրիվանեցին գրում է, որ յուրաքանչյուր իշխանական տոհմ ուներ իր դրոշն ու պատերազմական փողը, որ ժառանգաբար անցնում էր տոհմի ավագ ներկայացուցիչներին: Նույնն է հաստատում նաև Մխիթար Գոշը, գրելով, որ Մահկանաբերդի Արծրունի իշխան Վասակի մահվանից հետո նրա եղբայր Քուրդ Արծրունին ստացել է «զդրոշ նորա եւ զփոխ եւ զիշխանութիւն»: Թեև ընդունված է այն կարծիքը, որ որևէ հայ իշխանական տան դրոշ չի պահպանվել: Սակայն Անեցի մեծատուն Տիգրան Հոնենցի դրոշը, որի վրա հյուսված է վերջինիս զինանշանը, կարծիքի բացառումն է: Դրոշի սև գույնը և դամբարանում գտնվելը, ամենայն հավանականությամբ, սգո խորհրդանշան է:

ԽԱՂԲԱԿՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Զաքարյան եղբայրների մղած ազատագրական կռիվներին մասնակցեցին Խաղբակ Խաչենցու զավակները: 1201-1203-ական թվականներին Վասակ Խաղբակյանը, նրա եղբայրներ Գրիգորը, Զաքուռը, որդիներ Պապաք Ա-ն, Մգդեմը, Պռոշ Հասանը մասնակցել են Բջնիի, Դվինի, Վայոց ձորի համար մղված մարտերին: Հաղթական պատերազմից հետո Զաքարյան Իվանե Ա-ն Վասակ Խաղբակյանին հանձնեց Կեչառիսից մինչև Վայոց ձոր, Արփա գետի վերին հոսանքներն ընկած հողերը՝ շնորհելով նրան իշխանական կոչում և տալով կողմնակալ-կուսակալի պաշտոնը: Վասակ Խաղբակյանն իր իշխանության մայրաքաղաք է դարձնում Սրկողունք ավանը (ներկայումս՝ Եղեգնաձորի տարածաշրջանի Վերնաշեն գյուղը): Գրիգոր Խաղբակյանին տրվեց Ուրծ գավառի մի մասը (ներկայումս՝ Արարատի տարածաշրջանի հյուսային մասը):

Նոր իշխանատունը տոհմի հիմնադիր Վասակի հոր անունով ի սկզբանե կոչվեց Խաղբակյան, սակայն ի պատիվ Վասակի որդի ու իրավահաջորդ Պռոշ Հասանի՝ ստացավ նաև Պռոշյան անվանումը:

Զաքարյան իշխանապետությունը և բովանդակ հայ պատմությունը շատ աղքատ կլիներ առանց այս առնական, շինարար, մշակութանպաստ տոհմի:

Անկախ նրանցից, թե երկրում ինչպիսի իրադրություն էր, հարմար թե անհարմար, միևնույնն է, հայը պետք է կառուցեր և կառուցեր հիմնավոր:

Կառուցեր բերդեր, որ պաշտպաներ իր ինքնությունը, կառուցեր եկեղեցիներ, գրատներ, դպրանոցներ, համալսարաններ, որ իր ոգուն հավերժություն ապահովեին: Եվ Խաղբակյան տան բոլոր սերունդները իրենց իշխանատիրությամբ կանգնեցին ազգանպաստ այդ մեծ գործի գլուխ: Արդեն 1214 թվականին Վասակ Ա-ի պատվերով ավարտվում է Կեչառիսի Կաթողիկե եկեղեցու կառուցումը: Սրան հաջորդում են Գլաձորի սուրբ Ստեփանոսը, Ոծոպը, Կուչին, Վանստանը, Աղջոց Սուրբ Ստեփանոսը, այլ կառույցներ: Բայց այս տոհմի շինարարական գործունեության գլուխգործոցը, անշուշտ, 13-րդ դարի 40-ական թվականների Պռոշ Հասան իշխանի կողմից Զաքարյան Ավագից գնված Գեղարդավանքում 1280-ական թվականներին փորված վիմափոր եկեղեցիներն են:

Իշխանական այս տոհմից են սերվել բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին և հոգևոր գործիչ Զաքարիա Գնունյաց եպիսկոպոսը:

Խաղբակյանները մինչև 13-րդ դարի սկիզբը հողային տիրույթներ ունեին Խաչենում, իբրև իշխանական տոհմ՝ հնարավոր է ունենային նաև զինանշան, սակայն այդ մասին հավաստի տեղե-

կությունները չկան: Իսկ երբ նրանք տեր դարձան Կեչառիսից մինչև Արփա գետն ընկած հողերին և ստանձնեցին կուսակալի պաշտոն, որդեգրեցին նոր զինանշան:

Նոր զինանշանն ընդունվել է Վասակ Ա-ի օրոք և առաջին անգամ հանդիպում է Կեչառիսի Կաթողիկե եկեղեցում: Պատկերագրության առանցքը դիմահայաց արծիվն է, որը մագիլներով բռնել է խոյի ողնաշարից: Զինանշանը կրող քարը նախապես եղել է Վասակաշեն Կաթողիկե եկեղեցու պատին, բայց հետագայում ցած է ընկել: Զինանշանային այս պատկերագրության ընտրությունը, հավանաբար, կայանում է նրանում, որ Վասակ Ա Խաղբակյանը ցանկացել է հաստատել, որ իրենք՝ Խաղբակյանները, հանդիսանում են Սյունյաց

թագավորության իրավահաջորդները, և այդ ժառանգականությունը ապացուցում են վերջիններիս զինանշանը սեփականելով:

Խաղբակյան տոհմի հաջորդ ներկայացուցիչները հետագայում լրացնելով, հարստացնելով պատկերավորման մանրամասները՝ հավատարիմ մնացին որդեգրած զինանշանին:

Գլաձորի համալսարանի Սուրբ Ստեփանոս եկեղեցու գմբեթի թմբուկի հարավային պատուհանի պսակից վեր, արտաքուստ, կառուցման ժամանակ տեղադրվել է իշխանատիրության զինանշանը: Պատկերաքանդակը կրկնում է Կեչառիսի զինանշանը: Այստեղ ևս արծիվը պատկերված է դիմահայաց: Գլուխը տիրական տեսք ունի, աչքերը խիստ են, կտուցը՝ զորեղ: Թռչնի թևերը ամբողջովին բաց են, վերնամասում դրանք ձևավորված են զիգզագ նախշազարդով, որոնք այնուհետև զուգահեռ ակոսներով իջնում են մինչև թևերի ծայրը: Կուրծքը լիքն է, ամուր, ձևավորված անկանոն՝ մեծ ու փոքր շրջանակներով: Հզոր մագիլներով սեղմել, գամել է գլխով դեպի աջ դարձած խոյին: Կենդանու՝ դիտողին ուղղված հայացքը, ցավից բնականորեն ձգված ոտքերն ավելի են ընդգծում արծվի կամքը, ուժը: Արծվի մարմնի չորս անկյուններում գեղագիր տառերով փորագրված է եկեղեցու կառուցման թվականը՝ «Թ (վին) ՉԻԲ(1273)»:

Խաղբակյանների զինանշանային տարբերակներից մեկը Գեղարդի վիմափոր գավիթում է: Սրահի երկու կամարները միացնող սյան գլխին երևում է ցուլի գլուխ՝ բերանից օղակ կախված, որից շղթայված են երկու իրար դեմ-հանդիման կանգնած և դեմքով դիտողին դարձած առյուծներ, որոնց պոչերի ծայրերն ավարտվում են վիշապի գլուխներով: Շղթայի տակ, կենտրոնական մասում պատկերված է դիմահայաց, թևերը կիսաբաց, կուրծքը բնականորեն դուրս ցցված արծիվը, որը մագիլներով պահում է խոյի ողնաշարից: Գլաձորի պատկերաքանդակին հակառակ՝ այստեղ խոյը գլխով դարձած է դեպի ձախ, իսկ ամբողջ քանդակաշարքը մատուցված է առանց մանրամասների ընգծման, հարթ մշակմամբ: Սակայն ամբողջական պատկերը խիստ ազդեցիկ է ու խոսուն: Առյուծները կերպավորում են Պռոշ Հասանի Պապակ Բ և Ամիր Հասան Ա որդիներին, որոնք հավերժորեն կապված են հայրենիքի պաշտպանության շղթային:

Խաղբակյանների իշխանանիստ-մայրաքաղաքում՝ Սրկողունք գյուղում, կառուցվել է պալատ (դարբաս): Պալատի մուտքի բարավորին քանդակված է եղել տոհմական զինանշանը՝ դեմ-դիմաց կանգնած զույգ առյուծներով, սակայն այդ քարը հետագայում օգտագործվել է այլ նպատակով, և առյուծների պատկերները փշրվել են:

Հետաքրքիր լուծում է տրված պատմական Գոմք գյուղում, 1277 թվականին կառուցված որմնափակ խաչքարին: Գոմք գյուղի որմնափակ խաչքարը կառուցվել է Խաղբակյանների տան ծառայական Խոյդանի որդիների՝ Մխիթարի և Արևիկի պատվերով: Որմնափակ

խաչքարի արևելյան կամարին, պատուհանից վերև քանդակված է իշխանատիրույթի տերերի՝ Խաղբակյանների զինանշանը՝ դիմահայաց, կիսաբաց թևերով արծիվը, որ մագիլներով ճզմել է դեմքով դեպի ձախ դարձած խոյին: Այս քանդակի արծիվը ձևով կրկնում է Գեղարդի վիմափորի արծվին, բայց մշակմամբ նման է Գլաձորի Սուրբ Ստեփանոսի թմբուկի վրա եղած քանդակին:

Հետաքրքրական է, որ նույն որմնափակ խաչքարի արևմտյան կողմում, ներքևի ճակատին պահպանվել է ևս մեկ զինանշանային քանդակ. իրար դեմ-հանդիման կանգնած են առյուծ և ցուլ: Ինչպես Գեղարդում՝ Խաղբակյանների տոհմի հիմնական զինանշանում, այստեղ ևս առկա են առյուծը և ցուլը: Հավանական է, որ որմնափակ խաչքարի նաև այս զինանշանային պատկերաքանդակը նույնպես պատկանում է Խաղբակյաններին: Որմնափակ խաչքարը, որ նույնաբնույթ հուշարձանների մեջ լավագույններից է, ինչպես նաև զինանշանները, պատրաստել են քարգործ վարպետներ Մխիթարը և Շնորհավորը:

Մեծանուն հայագետ Գարեգին Հովսեփյանցը դարասկզբին Գոմք գյուղի մոտ գտնվող Թարփ գյուղատեղում տեսել, նկարագրել է մի խոյաձև տապանաքար, որը պատրաստվել է 1264 թվականին, Փուրդուլի եղբոր՝ Ճուրդուլի հիշատակին: Տապանաքարի մի երեսին դեմ առ դեմ կանգնած են շղթայից զարկված առյուծ և ցուլ, իսկ մյուս երեսի պատկերների մեջ առկա է մագիլների մեջ խոյ բռնած արծիվը: Փաստորեն, տապանաքարի վրա առկա են Խաղբակյան տոհմի զինանշանային պատկերները:



ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Զաքարյանների իշխանապետության հզոր, ինքնօրեն իշխանատոհմերից են Օրբելյանները: Մոր կողմից Բագրատունիներից սերված Օրբելյանները, որ տիրույթներ ունեին Լոռիում և Ջորագետում, Հայաստանի արևելյան սահմանագլխին հայտնվեցին 12-րդ դարի վերջին:

Էլիկում Ա-ն, հավանաբար, 12-րդ դարի 70-ական թվականներին Ատրպատականի, Առանի և Նախճավանի կառավարիչ Մուհամեդ Փահլավանի կողմից նշանակվեց Երնջակ բերդի, Ճահուկ ավանի, Քալասրահի զորքերի գլխավոր: Նա ամուսնացավ տեղական մեծահարուստ Աբաս Ճահկեցու և Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի քրոջ աղջկա՝ Խաթունի հետ, որը կարևոր դեր կատարեց նրա քաղաքական կողմնորոշման գործում դեպի հայկականն ու հայությունը: Նա զոհվում է 1184 թվականին, Գանձակի ճակատամարտում: Միակ որդին՝ Լիպարիտ Գ-ն, մոր հետ արգելափակվում է Նախճավանում:

Իսկ հայ-վրացական զորագնդերն արդեն մոտենում էին Սյունիքին: Ստեփանոս եպիսկոպոսը դիմում է Իվանե Ա Զաքարյանին, Թամար թագուհուն, վերջինիս որդի Գեորգի Լաշային և նրանց հովանավորությամբ կազմակերպում քրոջ որդու փախուստը Նախճավանից: Իվանե Ա Զաքարյանը Լիպարիտ Գ-ին նշանակում է Սյունիքի վրա հարձակվող զորաջոկատներից մեկի հրամանատար: Լիպարիտ Գ-ն կռվում է քաջաբար և Սյունյաց լեռնաշխարհն ազատագրելուց հետո Իվանե Ա-ից տիրույթներ է ստանում Գեղարքունիքում, Վայոց ձորում, Կոտայքում, Ուրծում: Այս Լիպարիտ Գ-ով էլ սկսվում է Օրբելյան իշխանատոհմը:

Օրբելյան իշխանատոհմը հայ իրականությանը տվել է ականավոր ռազմական, քաղաքական և հոգևոր գործիչներ: Լիպարիտ Գ-ի որդի Սմբատ Բ-ն, որ մոնղոլների տիրապետության պայմաններում այնքան հզոր դիրք ուներ Հայաստանում և մոնղոլական արքունիքում, որ իր իշխանատիրույթում ինքնօրեն արքա էր ճանաչված, Տարսայիճ Ա-ն, վերջիններիս ժառանգներն ավելի քան երեք ու կես հարյուրամյակ տիրեցին երկրամասին՝ կռվելով բազում թշնամիների դեմ, անխարդախ ծառայելով հայ ժողովրդի հարատևության գաղափարին:

Օրբելյան տոհմի հոգևոր կենտրոններում՝ Տաթևում և Նորավանքում, ինչպես նաև ընդարձակ իշխանատիրույթի մշակութային մյուս օջախներում՝ Հերմոնում, Ցաղաց քարում, Եղեգյաց անապատում, Մաքենյաց վանքում, Գնդեվանքում, Մամասի վանքում և այլուր, նրանց հովանավորությամբ ստեղծվեցին հարյուրավոր մեծարժեք ձեռագրեր: Գլաձորի համալսարանի փակվելուց հետո, Օրբելյանների նպաստավորմամբ՝ բարձր տիպի միջնադարյան ուսումնական հաստատությունը վերաբացվում է Տաթևում և իր գործունեության ընթացքում հայ մշակույթի սպասավորների պատրաստման գործում անգնահատելի դեր կատարում:

Մեծ է Օրբելյանների իշխանատոհմի ծավալած շինարարական գործունեությունը: Ավելի քան մեկ դարի ընթացքում Օրբելյան տան տարբեր իշխանավորներ (Լիպարիտ Գ, Սմբատ Բ, Տարսայիճ Ա, Բուրթել Բ) կառուցել են Նորավանքի հոյաշեն եկեղեցիները, գավիթը, տոհմական տապանատունը: Այստեղ աշխատել ու շինությունները կառուցել են միջնադարյան Հայաստանի հանճարեղ ճարտարապետներ Սիրանեսն ու Մոմիկը: Օրբելյան տան պատվերով են կառուցվել Արենիի հոյաշեն եկեղեցին, Սելիմի իջևանատունը, Սուրբ Կարապետը, բազմաթիվ բերդեր, պալատական շինություններ:

Օրբելյանների տոհմը խնամիական կապերով կապված էր ժամանակաշրջանի մյուս հայկական իշխանատոհմերի հետ, իսկ Տարսայիճ Ա-ի Էլիկում որդու շառավիղ Բեշքեն Բ-ի դուստրը 15-րդ դարի առաջին կեսին Վրաստանի թագուհին էր, իսկ որդին՝ Ռուստամը, հասավ կարա-կոյունլու թուրքմենների պալատական մեծ վեզիրի պաշտոնին և նպաստեց Սյունիքում ու Այրարատում իր տոհմի իշխանությունը որոշ ժամանակով ամրապնդելուն:

Օրբելյանների իշխանատոհմի առաջին ներկայացուցիչների շրջանից զինանշանային պատկերներ չեն պահպանվել: Այն օրինակները, որ հասել են մեզ, վերաբերում են 14-րդ դարի սկզբին և առաջին կեսին:

Զինանշանային երկու պատկերներ պահպանվել են Օրբելյանների տոհմական տապանատանը՝ Նորավանքում:

Կառուցման թվականով վաղագույնը Սմբատ Բ-ի դամբարանում գտնվող Տարսայիճ Ա-ի որդի Էլիկում Դ-ի տապանաքարի բարձրա-

քանդակն է: Այն պատրաստված է 1310-ական թվականներին: Տապանաքարի վրա փորագրված է հասակով մեկ կանգնած առյուծ, որը մարմնի վերնամասով շրջվել ու նայում է դիտողին: Առջևի թաթերը հպված են կողերին: Դեմքը տիրական է, խորն ընկած աչքերը՝ վեհ ու հերոսական, մեջքին առկա է բծավոր բաշը: Պոչը ոտքերի միջնամասով փաթաթված է ոտքին: Առյուծի պատկերով զինանշաններ ունեն Զաքարյանները, Վահրամյանները, Պռոշյանները, Հոնենք, սակայն այստեղ այլևս պայմանականություն չկա, և որպեսզի պարզ լինի, որ, իրոք, տապանաքարի վրա զինանշան է պատկերված, ընթերցենք տապանագիրը. «Թվիս ՉԽԹ (1300): Զգեղեցկատիպն Էլիկում, որդի մեծի Տարսայիճին որ առյոծաւրէն խրոխտ մոընշեր ընդէմ այլասեռ գնդին...»:

Արձանագրությունից հետևում է, որ Էլիկում Դ-ն առյուծաբար կռվել է այլացեղ թշնամիների դեմ: Հավանաբար, նույն պատկերը եղել է նաև նրա դրոշի վրա: Բուրթելաշեն եռահարկ եկեղեցու հյուսիսային պատի արևմտյան կողմում, պեղումների ժամանակ գտնվել է մագիլներով գառ բռնած արծվի արձանային քանդակ: Պատմաբանները կարծում են, որ քարը նախապես եղել է եկեղեցու վերնամասում, երկրորդ հարկի ճակատային մասում: Զինանշանը պատրաստվել է եկեղեցու կառուցման ժամանակ՝ 1330-ական թվականներին: Զինանշանը, ինչպես և եկեղեցին, հավանաբար, կերտել է Մոմիկ ճարտարապետը: Արծիվը պատկերված է դիմահայաց, հզոր, տիրական գլխով, ուղղորդված, սուր հայացքով: Թևերը մարմնից հեռացած ու ուղղահայաց իջնում են ներքև: Հոդերի մասում ձևավորված են կլոր վարդյակով, իսկ ընդհանրապես՝ զուգահեռ փոսիկներով: Մարմնի ներքնամասից սկիզբ առնող ոտքերը մշակված են թեփուկաքանդակային եղանակով: Հզոր մագիլներով հենված է գառան ողնաշարի վրա: Թեև վերջինիս մարմնի ոչ մի մանրամասնը շեշտված չէ, բացի ականջներից, բայց պատկերված է իրական գծերով: Կենդանու վիզը մարմնի համեմատ երկար է, ինչը երբեմն գառը եղնիկի հետ շփոթելու պատճառ է դառնում: Կենդանին պատկերված է առջևի ոտքերը ծալած, ծնկած վիճակում և լիովին արտահայտում է Օրբելյան


Սելիմ

իշխանավորի գերագահ դիրքը շրջապատի թշնամիների նկատմամբ, որոնց պահել է ծնկաչոք վիճակում: Հիշատակարաններում հենց այդպես էլ խոսվում է Բուրթել Բ-ի մասին, որ ժամանակակիցներից ստացել է Մեծ հորջորջումը:

Չիվա

Սակայն արծվաքանդակի այսօրինակ մոտիվով զինանշանը Օրբելյան տոհմում առաջինն օգտագործել է Բուրթել Բ-ի հորեղբայր Ջալալ Օրբելյանը: Ջալալը Տարսայիճ Ա-ի և Մինախաթունի որդին է: Նրա տիրույթները գտնվում էին Ուրծաձոր և Արած գավառներում (ներկայումս՝ Արարատի և Եղեգնաձորի տարածաշրջաններում): Իշխանատիրույթի մայրաքաղաքը Չիվա գյուղն էր, որը 1298 թվականին նա վաճառեց ավագ եղբորը՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանին: Ջալալի կինն էր Զաքարյան տոհմից Իվանե Բ-ի դուստր Գոնցան: Նրանք միասին ներկայիս Արածո գետի (Արարատի տարածաշրջանում) վերին հոսանքում կառուցել են Սուրբ Կարապետ վանքը, որ կոչվել է նաև Սպիտակավոր Աստվածածին: Ահա այս կառույցում էլ պահպանվել է արծվի բարձրաքանդակով զինանշանը: Այն առանձին քարի վրա է: Արծիվը դիմահայաց, կիսաբաց թևերով է, մշակված է թեփուկաքանդակային եղանակով, մագիլներում ճզմել է գառան ողնաշարը: Զինանշանակիր քարը նախապես ագուցված է եղել եկեղեցու պատի մեջ ու հետագայում շենքի քանդվելու պատճառով ընկել է եկեղեցու ներսը: Եկեղեցու կառուցումն ավարտվել է 1301 թվականին: Այդ նույն ժամանակ էլ, հավանաբար, պատրաստվել է զինանշանը: Տարիներ շարունակ հավատացյալները արծվակիր քարի վրա մոմ են վառել, որի հետևանքով զինանշանը ծածկվել է մոմի մնացորդներով ու սևացել:

Փաստորեն, նույնապատկեր արծվակիր զինանշան ունեցել են Տարսայիճ Ա-ի որդիներ Էյիկում Գ-ի և Ջալալի ճյուղերը:

Իսկ ահա Տարսայիճ Ա-ի եղբոր Իվանե Գ-ի թոռը՝ Լիպարիտ Դ-ի որդի Չեսար իշխանը, որի տիրույթները տարածվում էին ներկայիս

Գլաձորի և Վերնաշենի սահմաններում, զինանշանի համար ընտրել է այլ կենդանու՝ ցուլի պատկերը: Այն քանդակված է 1332 թվականին կառուցված Սելիմի իջևանատան մուտքի ձախ կողմում, վերնամասում: Ցուլը պատկերված է զոհի վրա հարձակվելու պահին: Առջևի ոտքերը համաչափորեն ծալված են, պոչը ցցված է մեջքի վրա: Կենդանին դեմքով նայում է դիտողին: Կիսակլոր եղջյուրները նույնպես շեշտում են ցուլի կատաղությունը:

Խաղբակյան իշխանատոհմի ներկայացուցիչները, որ Օրբելյանների հարևաններն էին, ի սկզբանե որդեգրեցին Սյունյաց իշխանատան զինանշանային պատկերասրահի կենդանիներին (արծիվ, առյուծ, ցուլ)՝ դրանով հաստատելով իրենց ժառանգական իրավահաջորդությունը Սյունյաց իշխանատան նկատմամբ: Մինչդեռ Օրբելյանների իշխանատան առաջին ներկայացուցիչները, որոնք եկվոր էին, գիտակցաբար չդիմեցին այդ պատկերասրահին, իսկ մեկ հարյուրամյակ անց նրանց ժառանգներն օգտագործեցին դրանք:



ՇԱՀՈՒՌՆԵՑՈՑ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Օրբելյանների իշխանատիրույթում ճանաչման է արժանացել Շահուռնեցոց տոհմը: Այս տոհմի նշանավոր ներկայացուցիչը Վահրամ Շահուռնեցին է, որ Օրբելյանների զորաբանակի սպարապետն էր: Հավատարիմ ծառայության համար այս քաջազուն զորավարը 13-րդ դարի 70-ական թվականներին Տարսայիճ Օրբելյանից որպես կալվածք ստացել է Վայոց Ձորի Հերհեր գյուղը՝ իր շրջակայքով:

Վահրամ Շահուռնեցուց հետո նրա գործը շարունակել են որդիները՝ Ուքանը, Ամատը, Հասանը: Թե՛ Վահրամը, թե՛ որդիները նահատակվել են թշնամիների դեմ մղված մարտերում:

1340-ական թվականներին իշխանատիրույթի գահերեց տերերից Բեշքեն Օրբելյանն իր որդի Կուկային ամուսնացնելով Ամատի միակ դուստր Նաթիլի հետ՝ տիրացավ պատմության թատերաբեմից հեռացած Շահուռնեցոց տիրույթներին:

Հերհեր գյուղից մեկ կիլոմետր հյուսիս-արևելք, երկու ձորերով եզերվող բլրի գագաթին գտնվող հնագույն Սուրբ Սիոն միանավ եկեղեցու հարավային պատին կից, Վահրամ Շահուռնեցու օրոք, 1282-83 թվականներին կառուցվել է Սուրբ Աստվածածին միանավ, թաղակապ եկեղեցին:

Սուրբ Աստվածածին եկեղեցու հարավային ճակատի միակ

պատուհանի պարակալի գլխին տեղադրված է Շահուռնեցոց տոհմի զինանշանը:

Դիմահայաց արծվի արձանային քանդակը հիմնականում կրկնում է գահերեց տերերի՝ Օրբելյանների զինանշանը: Արծիվը թևաբաց դիրքով, մարմնի միջնամասից սկսվող ամուր մագիլներով հենված է պատուհանի պսակին: Մարմինը լիքն է, ծավալուն, ձևավորված պարուրաձև կլորացող շրջանակներով: Գլուխը կլոր է, հզոր կտուցը մի փոքր խոնարհված է, խոշոր աչքերով հետևում է իր մարմնի տակ սեղմված ու ողնաշարաջարդ արված խոյին: Արծվի բաց թևերը, ընդհանուր բացվածքին համապատասխան, ձևավորված են զուգահեռ ակոսներով: Գլխով դեպի ձախ ուղղված խոյի մարմինը չի երևում. արծվի մարմինն այն ամբողջովին ծածկել է, ձախ կողմի թևի բացվածքի վրա երևում է խոյի առավել մանրամասն մշակված գլուխը, որ ուղղված է դիտողին: Խոյի անպաշտպան ու տառապագին վիճակն արտահայտվում է վերջինիս դուրս ընկած աչքերով:

Շահուռնեցոց զինանշանային արծիվը մատնանշում է վերջիներիս ուժը, հզորությունը և թշնամիներին ճզմելու, ոչնչացնելու համոզմունքն ու վստահությունը:

ՄՇԿԱՎԱՆՔԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ



Մշկավանքի (կամ Մշակավանքի) եկեղեցական համալիրը գտնվում է Լոռու մարզի Կողբ գյուղի մոտ:

Պատմականորեն Կողբ գյուղի տարածքը մտել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի, իսկ 11-12-րդ դարերում՝ Տաշիր-Ձորագետի կամ Կյուրիկյան թագավորության կազմի մեջ՝ ընդգրկելով Կողբափոր գավառը և Կանգարքի մի մասը: 1113-ին Կյուրիկյան թագավորությունն ընկավ և Կողբափոր գավառը միացվեց սելջուկյան Գանձակի ամիրայությանը: 1124 թվականին Վրաց Դավիթ թագավորն ազատագրեց այդ տարածքները և միացրեց Վիրքին: 12-րդ դարի վերջին Կողբափորը և հարակից հողերն անցան Իվանե Զաքարյանի տիրապետության տակ:

Մշկավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցական համալիրը կառուցված է անտառապատ բլրի բարձրադիր հարթակի վրա: Այստեղ պահպանվել են Սուրբ Աստվածածին եկեղեցին, սրան արևմուտքից կից գավիթը՝ անկյունային խցերով:

Պատմիչ Վարդան վարդապետի հաղորդման համաձայն՝ 1119 թվականին այստեղ եղած եկեղեցին երկրաշարժից փլվել է:

Ե՞րբ և ո՞վ է կառուցել ներկայիս եկեղեցախումբը՝ հայտնի չէ:

Եկեղեցին հատակագծում քառակուսի միանավ դահլիճ է՝ ծածկված կիսագլանաձև թաղով՝ բարձրաղիր երկթեք կտուրով:

Եկեղեցու արևելյան ճակատին առկա է կոմպոզիցիոն բարդ պատկեր:

Խորանի պատուհանի կենտրոնից ուղղահայաց բարձրանում են երկու զուգահեռ եզրակալներ, որոնք չմիանալով՝ գծում են կլոր շրջանակ, ապա կրկին բարձրանում և նետի ծայրակալի տեսք ընդունելով՝ կազմում են խաչի հիմքը: Նույն եզրակալները, դեպի վեր բարձրանալով, անթերի ոճավորված խաչի կառույցի մաս են դառնում:

Այլ եկեղեցիների վրա ևս այսպիսի ոճավորված խաչեր կան: Այստեղ առանձնահատկությունն այլ է: Խաչն իր կառույցով վերածվել է զինանշանի: Խաչի վերին թևի վերնամասում պատկերված է դիմահայաց ցուլի գլուխ: Տեղի եռանկյունաձև տարածքին համապատասխան՝ հարթաքանդակի եղանակով իրականացված քանդակն արտահայտիչ երևում է. կարճ կոտոշներ, կլոր գլխամաս, նեղացող դնչամաս, նշաձև աչքեր:

Այս պատկերի զինանշան լինելը (այլ կերպ այն չէր հայտնվի խաչի վերին թևի ներսում) հաստատող մյուս մանրամասնը խաչի հիմքի և պատուհանի միջև գտնվող կլոր շրջանակն է, որը փոխարինում է օղակին՝ իշխանության նշանին: Շրջանի ներսում փորագրված հնգաթև աստղի թևերի միջև ռոմբաձև տարածքում առկա հինգ գնդերը ևս հաստատում են, որ ամբողջ պատկերը զինանշանային է:

Երկրամասի թե՛ նախկին տերերը՝ Կյուրիկյանները, թե՛ եկեղեցու կառուցման ժամանակակից տերերը՝ Զաքարյանները, իրենց զինանշանին ցուլ չեն պատկերել: Ամենայն հավանականությամբ, սա տեղացի որևէ իշխանի զինանշանն է:



ԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ

Երևան քաղաքի հյուսիս-արևելյան եզրին է գտնվում Ավանի Սուրբ Հովհաննես եկեղեցին: Այն արևելքից-արևմուտք ձգված ուղղանկյուն տեսքով շինություն է: Կառուցված է տեղական սրբատաշ տուֆ քարով:

Եկեղեցու կտուրն ամբողջովին ավերված է: Տեղում պահպանված մանրամասները թույլ են տալիս ճշտելու, որ այն սկզբնապես կառուցվել է 4-5-րդ դարերում և այնուհետև մի շարք անգամներ նորոգվել, փոփոխությունների է ենթարկվել, ինչպես նաև պահպանված վիճակում ունեցել է միաթռիչք երկթեք ծածկով կտուր:

Եկեղեցին ավերվել է 1679 թվականի ահեղ երկրաշարժից և այլևս չի վերականգնվել:

Եկեղեցու արևմտյան արտաքին պատին պահպանվել է շինության հնագույն վիմագիր արձանագրությունը: Այն փորագրված է 1271 թվականին: Ցավոք, արձանագրությունը կիսատ է, և պարզ չէ, թե ով է հեղինակը:

Եկեղեցու խորանի ճակատային մասը շատ հետաքրքիր ձևավորում ունի:

Գլանաձև եզրակալով ուղղանկյուն հարթության կենտրոնական մասում քանդակված է կլոր գունդ, որը ձևավորված է մանրաքանդակ նախշերով և իր վրա ունի տարբեր կտրվածքներով խորացումներ: Գնդի երկու կողմերին փորագրված են արծիվներ: Արծիվներն ունեն միատեսակ, համաչափ կառուցվածք: Ոտքերով, բաց թևերի եզրերով և



պոչով նրանք հենված են գնդի վրա: Արծիվների թևերի գլխամասային հատվածները և ընդգծված կրծքամասերը մշակված են իրար վրա նստած ռոմբավոր խորացումներով, իսկ պոչը և թևերի եզրային մասերը՝ զուգահեռ ակոսներով: Արծիվների հզոր ճանկերը խրված են գնդի նախշերի մեջ: Արծիվների գլուխները կոտրված են: Ամբողջ քանդակն իրականացված է կլոր քանդակի եղանակով և ավարտուն ու կատարյալ է:

Պատկերը հարդարանքի մաս չէ: Այստեղ գունդը իշխանության, իսկ զույգ արծիվները ուժի խորհրդանիշ են, այն ներկայանում է իբրև զինանշան:

Դժվար է ասել, թե զինանշանն ու՞մ է պատկանել և ե՞րբ է ստեղծվել: Ժամանակի հարցը, թերևս, կարող է լուծել զինանշանի ձախ կողմում փորագրված արձանագրությունը: Այն նույնպես փորագրվել է 1271 թվականին: Արձանագրությունը փորագրվել է Մեվանի որդի Ավանշահի անունից՝ եկեղեցու հերթական նորոգման առթիվ:

Ամենայն հավանականությամբ, խորանի ճակատակալ քարն իր վրա փորագրված զինանշանով այդ նորոգման արդյունքն է և պատրաստվել ու տեղադրվել է 1271 թվականին: Զինանշանը պատկանո՞ւմ է այս ոչ այնքան հայտնի Ավանշահին, թե՞ Երևան բնակավայրի այդ ժամանակի տերերից մեկ ուրիշին, առայժմ դժվար է ճշտել:

ՀԱՍԱՆ–ՋԱԼԱԼԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հայոց Արևելից երկրամասը՝ պատմական Արցախը, իր բարձրագահ լեռներով, իր ազատատենչ որդիների ուխտով, երբևէ գլուխ չի խոնարհել որևէ նվաճողի առջև: Թշնամիներն արնախում գայլերի պղտոր գետի պես եկել են Արցախի վրա, բայց ծեծված, թրջված կատվի նման՝ պոչերը ոտքերի մեջ առած, գլխապատառ փախել են, որ կարողանան փրկվել:

Երկրամասի իշխանավոր տերերը, որ սերում էին Հայկյան տոհմի Առանշահիկներից, թշնամիների դեմ մղած դարավոր կռիվներում մաս-մաս կորցրեցին հայրենի հողերը հյուսիսում, արևելքում, բայց 11-րդ դարի կեսերին, երբ Մայր հայրենիքում թշնամիների հարվածներից կորսվեց անկախությունը, Արցախ աշխարհում այն կարողացան պահել:

12-րդ դարի երկրորդ կեսին Ներքին Խաչենում իշխում էր Վախտանգ-Տանգիկը: Նրա իշխանատիրույթի մայրաքաղաքը Խոխանա բերդն էր, իսկ իշխանատոհմի հոգևոր կենտրոնը՝ Գանձասարը:

12-րդ դարի 80-ական թվականներին Զաքարյան Սարգիս Բ-ն, սկսելով Հայաստանի անկախության համար պայքարը, դեռևս իրենց անկախ կամ կիսանկախ վիճակը պահպանած հայ իշխանների ուժերը միավորում էր ոչ միայն քաղաքական ճանապարհով, այլև ազդեցիկ իշխանական տների հետ խնամիական կապեր հաստատելով: Նա իր դուստրերից Դոփին ամուսնացրեց Վերին Խաչենի իշխանաց իշխան Հասան Ա-ի, Վանենուն (հայտնի է նաև Նանա անունով)՝ Լոռու Կյուրիկյան Աբաս թագավորի, Նրջիսին՝ Դսեղի Մամիկոնյան-Համազասպյան իշխանական տան իշխանազուններից մեկի հետ, իսկ Խորիշահին կնության տվեց Ներքին Խաչենի իշխան Վախտանգ-Տանգիկին:

Վախտանգ-Տանգիկի և Խորիշահի որդին ու իրավահաջորդը նրանց ավագ որդին՝ Հասան-Ջալալն էր: Նա հորը հաջորդեց 1214 թվականին: Հայրենասեր իշխանապետի գործունեության սկզբնական 20 տարիներին, մինչև մոնղոլ-թաթարների նվաճողական արշավանքները, բարձրացավ իշխանատիրույթի տնտեսական հզորությունը, ծավալվեց մշակութային աննախընթաց վերելք: Հասան Ջալալը մեծ խորաթափանցությամբ ճկուն քաղաքականություն ծավալեց թաթար-մոնղոլների տիրապետության շրջանում և հիմնականում զերծ պահեց իր իշխանատիրույթն ավերածություններից: Մոնղոլ նվաճողների բարեհոգի վերաբերմունքին արժանանալու նպատակով՝ նա 1236 թվականին իր դուստր Ռուզուքանին ամուսնացրեց մոնղոլ զորավար Չարմաղանի որդի Բորա-Նոյինի հետ:

Մոնղոլների իշխանության հաստատումից հետո՝ 1230-ական թվականների վերջերից, Հասան-Ջալալը դուրս է բերել իր իշխանատիրույթը Զաքարյան Ավագի ենթակայությունից, այն դարձրել ինքնօրեն վարչական միավոր՝ հարկատու ուղղակի մոնղոլներին: Հասան-Ջալալն ինքն իրեն կոչում է «ինքնակալ բարձր ու մեծ Արցախական աշխարհի, ինքնակալ Խոխանաբերդի»: Ժամանակակից հիշատակությունների մեջ Հասան-Ջալալը պատվվում է «ինքնակալ», «արքա», «բարեպաշտ արքա», «թագավոր» տիտղոսներով, որոնք բնավ էլ ձևի համար չեն օգտագործվել, այլ տրվել են Արցախական աշխարհի կողմնակալ Հասան-Ջալալին:

Հասան-Ջալալի շինարարական գործունեության գլուխգործոցը Գանձասարի վանքն է: Հոյաշեն այս կառույցը համարվում է համաշխարհային մշակույթի գանձարանը մտած հայկական հինգ ճարտարապետական հուշարձաններից մեկը, հայ ճարտարապետության հանրագիտարանը: Կաթողիկե եկեղեցու կառուցումը 1216 թվականին սկսել են Հասան-Ջալալը, մայրը՝ Խորիշահը, կինը՝ Բաղաց թագավորի դուստր Մամքանը: 22 տարի է տևել շինարարությունը: Եկեղեցու օծումը տեղի է ունեցել 1240 թվականի հուլիսի 22-ին, Վարդավառի տոնի օրը, բազմահազար հյուրերի մասնակցությամբ:

Հասան-Ջալալի տոհմի զինանշանի մասին ոչինչ հայտնի չէ: Իսկ ահա իր՝ Հասան-Ջալալի զինանշանը, փորագրված է Գանձասարի գավթի հյուսիսային մուտքի վերևում, շրջակալի երկու կողմերում: Պատկերված են դեպի իրար կողմ շարժվող երկու առյուծներ: Կենդանիները պատկերված են կողքից՝ հարթաքանդակ եղանակով: Քանդակագործն ընդգծել է կենդանիների իշխանատենչ, կամային

հատկանիշները, որոնք արտահայտված են բացված երախով, կատաղի աչքերով, դեպի վեր ցցված պոչերով, սուր մագիլներով: Պետք է նկատել նաև, որ եթե չլինեն կենդանիների վզի ակոսավոր փոսիկները, որոնք ներկայացնում են առյուծների բաշերը, նրանց կարելի է շփոթել ցանկացած կենդանու, հատկապես գայլերի հետ, քանի որ անհավաստի են պատկերված առյուծների գլուխները: Իրար մոտեցող առյուծները հայր ու որդի Հասան-Ջալալն ու Աթաբեկն են: Անգամ համոզված կարելի է պնդել, որ Հասան-Ջալալը ներկայացված է ձախակողմյան պատկերում, որտեղ առյուծի դիմաց փորագրված է վեցաթև աստղ՝ իշխանության նշանը:

Զույգ առյուծների այս պատկերը, հավանաբար, դաջված է եղել նաև Հասան-Ջալալի դրոշին, իսկ հետագայում փոխանցվել է Աթաբեկին:

ԱՌԻՆՋԻ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Աբովյանի տարածաշրջանի Առինջ գյուղի մոտ պահպանվել են բերդի մնացորդներ:

Բերդապարսպի ստորին շարքերը մասամբ շարված են անտաշ, իսկ վերին շարքերը և մուտքի հատվածը՝ կոփածո սրբատաշ քարերով:

Բերդի ներսում կան տների և եկեղեցու ավերակներ: Բերդի տարածքում պահպանվել են նաև միևնույն՝ 1501 թվականին պատրաստված երկու զինանշան:

Բերդի մուտքի զինանշանը: Այն փորագրված է մուտքի

բարավորի երեսին: Միակտոր քարի ներքևի հատվածը գոգավոր մշակում ունի: Ներքին մասում կոր է գծվել, որով ստեղծվել է կիսաշրջան կամ կիսագնդի պատկեր: Կիսագնդի վերևում պատկերված են վիշապներ, որոնց գլուխները քարի կենտրոնական հատվածում են: Բացված երախները համաչափորեն հպված են իրար, յուրաքանչյուրի բերանում երևում են չորսական իրար սեղմված ատամներ (երկուսը՝ վերևում, երկուսը՝ ներքևում), որոնց արանքում տեսանելի է լեզուն: Կլորավուն գլուխների կենտրոնական մասում տեղադրված են նշաձև աչքերը, գլխի վրա պատկերված են երկու փոքրիկ կոտոշներ, որոնք թագի տպավորություն են ստեղծում: Գլուխների շարունակությունը կազմող հզոր մարմիններն իրար վրայով անցնելով՝ հպվում են կիսագնդին և, արդեն քարի վերին մասում երկրորդ գալարը տալով՝ սրածայր պոչով ձգվում են մինչև քարի ուղղահայաց եզրերը:

Վիշապները պատկերված են հարթաքանդակի եղանակով, իրականացված են առանց մանրամասների ընդգծման, բայց խոսուն ու արտահայտիչ են, և թվում է՝ աչքերից հուր է ցայտում:

Կիսաշրջան-կիսագնդի առկայությունը պատկերային համակարգում վերջինիս զինանշանային հաստատումն է:

Զինանշանի կոնկրետ պատկանելությունն անհայտ է: Մուտքի բարավորի աջակողմյան հենարան քարին փորագրված արձանագրությունից պարզվում է, որ վիշապներով զինանշանը 1501 թվականին ձևավորել է Մանվել քարգործը:

Ստեփանոս եպիսկոպոսի զինանշանը: Բերդի տարածքում շարաքարի երկու բեկորների վրա քանդակված է դիմահայաց, ճանկող արծիվ:

Արծիվը կիսաբաց թևերի եզրերով, հզոր պոչով հենված է գետնին և ճանկերով ողնաշարաջարդ է անում ինչ-որ կենդանու (վերջինս թեև ամբողջովին ջարդոտված է, բայց, ամենայն հավանականությամբ, գառ է): Արծվի գլուխն, ըստ պահպանված մասի, եղել է կլոր, մարմնի վերնամասն

ու կուրծքը ձևավորված են իրար վրա շարված եռաշար ռմբափոսիկներով: Թևերի մնացած հատվածները ձևավորված են եռաշարք ուղղահայաց զուգահեռ փոսիկներով, իսկ ոտքերը՝ զուգահեռ բարակ գծերով: Զինանշանն իրականացված է կլոր քանդակի եղանակով:

Արծվապատկեր զինանշանը երեք կողմից առնված է երկաթագիր արձանագրության շրջանակի մեջ: Ահա այն. «Ստեփանոս եպիսկոպոս նկարող յիշեցեք, ի թվին ՉԾ (1501 թ.)»:

Արձանագրությունից պարզ չէ, թե ով է այս Ստեփանոս եպիսկոպոսը: Հնարավոր է, որ այս Ստեփանոս եպիսկոպոսը 1501 թվականին հաստատվել է Առինջի բերդում, նորոգել բերդը, այնտեղ գտնվող եկեղեցին, կառույցները և փորագրել է տվել բերդի վիշապներով և իր՝ ճանկող արծվի զինանշանները:



ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ՁԻՆԱՆՇԱՆԸ

17-18-րդ դարերում Արցախական աշխարհի երբեմնի հզոր իշխանատիրույթում ձևավորվեցին հինգ մելիքություններ, որոնք իշխանատիրույթի նոր ձև էին: Դրանց թվում էր նաև Դիզակի մելիքությունը:

Դիզակի մելիքության տարածքն ընդգրկում էր նույնանուն լեռներից մինչև Արաքս ընկած հողերը և Հասան-Ջալալի երբեմնի հզոր իշխանատիրույթի մասն էր կազմում:

Դիզակի իշխանավորները Մելիք-Եգանյաններն էին: Այս իշխանատոհմի ծագման և Խաչենում հաստատվելու մասին հայտնի է հետևյալը. նրանք սերում են Լոռի գավառի Լոռիս-Մելիքյաններից: Ընտանեկան ընդդիմություն է ծագել տոհմի երկու ներկայացուցիչների՝ Մելիք Էլիզբարի և Մելիք Եգանի միջև՝ հողային ժառանգության կապակցությամբ: Մելիք Էլիզբարն ուժով տիրել է Մելիք Եգանի հողաբաժնին՝ Փամբակի ձորին և Լոռիի մի մասին: Չկարողանալով ընդդիմանալ Մելիք Էլիզբարին՝ Մելիք Եգանը 17-րդ դարի սկզբներին իր ամբողջ գերդաստանով, ժողովրդով հեռանում է Լոռուց և, կտրելով Արցախական աշխարհը՝ հաստատվում է Դիզակ գավառում:

Մելիք Եգանի տոհմաճյուղի մասին Տող գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցու խաչակալի արձանագրությունից հայտնի են հոր՝ Ղուկաս վարդապետի, մոր՝ Մարիամի, եղբոր՝ Արամի, քրոջ՝ Խանումի, կնոջ՝ Խանումի, որդիների՝ Արամի, Եսայու, Բաղդամի, Վերտի և այլ ազգականների անունները:

Հայրը՝ Ղուկաս վարդապետը և որդին՝ Մելիք Եգանը, ձեռնարկում են նոր իշխանատիրույթի վերաշինությունը: Զբաղեցնելով մի շարք վարչական պաշտոններ՝ ի վերջո Մելիք Եգանը հաստատվում է Դիզակի մելիքական պաշտոնում: Նա մայրաքաղաք է դարձնում Տող գյուղը, իսկ հոգևոր կենտրոն՝ Գտիչի վանքը, որի առաջնորդ է նշանակում հորը՝ Ղուկաս վարդապետին: Վերջինս նորոգում է վանական համալիրը և միաբանություն հաստատում այդտեղ:

Մելիք Եգանն ամրացնում է Տող գյուղը, կառուցում պաշտպանական կառույցներ: 1707 թվականին գյուղի կենտրոնում կառուցվում է նրա ապարանքը: Այն ի սկզբանե ունեցել է բրգավոր շրջապարիսպ, որը մասամբ պահպանվել է դարպասի հետ միասին: Շենքը կառուցված է սրբատաշ քարով, երկհարկանի է, ներքին հարկը քարածածկ, վերին հարկն ունի պատշգամբներ: Գյուղի բարձրադիր թաղում Մելիք Եգանը կառուցել է Սուրբ Հովհաննես եկեղեցին, որը ծառայել է որպես Մելիք-Եգանյան իշխանատոհմի տապանատուն:

Մելիք Եգանի իշխանության ժամանակահատվածը համընկավ ազգային և՛ մտափայլատակումների, և՛ խռովքի ծանր ժամանակներին: Մի կարճ պահ փայլատակեց Դավիթ Բեկի ստեղծած հայկական անկախ իշխանապետությունը, որի դրոշի տակ կռիվներ մղեց նաև Մելիք Եգանը: Այնուհետև գոյատևման համար նա մշտական բախման մեջ էր թուրքական թափառիկ ցեղերի հետ: Այդ իրադրության մեջ հանդես բերելով դիվանագիտական հեռատեսություն՝ Մելիք Եգանը ընդունում է Պարսկաստանի Նադիր շահի գերիշխանությունը: Նադիր շահը 1736 թվականին նրան շնորհում է խանի տիտղոս և նշանակում Արցախի հինգ մելիքների գերագահ իշխան, որը իրավունք էր վերապահում նրան հավաքելու և շահի գանձարան հանձնելու մելիքությունների՝ ժողովրդից գանձվող հարկերը: Փաստորեն, այդ քայլով ապահովում է նրանց կիսանկախ վիճակը և Արցախի մելիքությունների հողերը զերծ է պահում պարսկական ոտնձգություններից:

Մելիք Եգանի օրոք էր, որ Արցախական աշխարհում իր նենգ գործունեությունը ծավալեց հայկական մելիքությունների մեծագույն թշնամին՝ թուրք Իբրահիմը: Այս մարդակերի զոհերը դարձան բազմա-

թիվ հայորդիներ, ինչպես նաև Մելիք Եգանի տոհմի շատ անդամներ: Եվ այդ նաև այն պատճառով էր, որ 1744 թվականին իր մահկանացուն կնքեց մեծ հայրենասեր ու քաջամարտիկ հայը՝ Մելիք Եգանը, իսկ նրա հաջորդները չկարողացան դիմագրավել Իբրահիմի խարդավանքներին: Մելիք Եգանին թաղեցին Տող գյուղի տոհմական տապանատանը և գերեզմանաքարին փորագրեցին.

Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մելիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին:
Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն քագատրին:
Տիրապետեց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ պարսից ազգին
Քան զիշխանս հայոց երկրին...
ՌՃՂԳ (1744):

Մելիք Եգանը, որ ինչպես տապանագիրն է հաստատում, տիրում էր բուն Աղվանքից՝ Քուռ գետից մինչև Արաքս ամբողջ երկրամասին և հայոց երկրի իշխանն էր, ուներ իր իշխանությանն արժանի զինանշան: Մեզ հասած օրինակը պահպանվել է Կավաքավանքի եկեղեցու ներսում: Եկեղեցին գտնվում է Տող գյուղի մոտ, Իշխանագետի մի լայնանիստ և բարձր բլրի գլխին: Այն վերակառուցվել է 1742 թվականին, երբ Մելիք Եգանը գտնվում էր իր փառքի գագաթնակետին:

Զինանշանում պատկերված է երկգլխանի արծիվ: Թռչնի մարմինը վահանաձև է: Մարմնի վերնամասից դուրս են գալիս երկու համաչափ, աղեղնաձև երկար վզեր, որոնք ավարտվում են կլոր գլխով, ընդգծված աչքերով ու սուր կտուցով: Արծվագլուխների վրա եռաճյուղ թագեր են: Թռչունը հենված է եռանկյունաձև պոչի վրա: Նույն համաչափությամբ մարմնի վերնամասից մինչև պոչն են իջնում ներքևում սրացող թևերը: Թռչունը ձախ ոտքի ճանկերով թևի վրա պահում է գնդավոր գլխով իշխանության նշանը-մականը, իսկ աջ ոտքի ճանկերով թևի վրա պահում է փոսիկավոր խաչը՝ հոգևոր նշանը:



Մելիք Եգանն իր զինանշանի համար ընտրելով երկգլխանի արծվի պատկերը, հավանաբար, հաստատել է իր կապը Մամիկոնյան-Համազասպյան իշխանատան հետ: Թեև պետք է նկատել, որ հակառակ Մամիկոնյանների երկգլխանի արծվի, որը մագիլների մեջ բռնել է գառ, այստեղ արդեն արծիվը մագիլներում պահում է աշխարհիկ ու հոգևոր իշխանության նշանները՝ մականը և խաչը:

Մելիք Եգանի զինանշանը որոշ նմանություն ունի նույն ժամանակաշրջանի ռուսական գերբանշանի հետ, որտեղ առկա է գրեթե նույնական պատկերը, միայն այն տարբերությամբ, որ ռուսական արծիվը թևաբաց է, և գլուխների արանքում առկա է ռուսական կայսրության թագը:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Խմբագիր՝ Հրաչյա Պետրոսյանց
Ձևավորումը, լուսանկարները՝ Հեղինակի
Համակարգչային շարվածքը, տեխնիկական
և գեղարվեստական խմբագրումը՝ Արգիշտի Պետրոսյանցի

Ստորագրված է տպագրության՝ 26.02.2005.:
Տպաքանակ՝ 500:

«Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, Արշակունյաց 2